

# Ի. ՍՏԱԼԻՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՁԽԱՏԱՆՔԻ

ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՅԵՎ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ

ՈՒ

ԱՅԼ ՅԵՐԿԵՐԵՍԱՆԻՆԵՐԻՆ

ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ



ՊՐՈՒՆՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՎ





1111

# Ի. Ս Տ Ա Լ Ի Ն

ՍՏՈՒԳՎԱՄ Է 1961 թ.

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՅԵՎ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ

ՈՒ

ԱՅԼ ՅԵՐԿԵՐԵՍԱՆԻՆԵՐԻՆ  
ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

144

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՅԵՎ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍԲ  
ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ,  
1937 թ. մարտի 3—5-ին:



А  $\frac{\text{II}}{6933}$

**И. СТАЛИН**

**О недостатках партийной работы  
и мерах ликвидации троцкистских  
и иных двурушников**

**Доклад и заключительное слово на пленуме  
ЦК ВКП (б) 3—5 марта 1937 г.**

Ընկերներ :

Պլենումում լավամ դեկուցումներից և դրանց շուրջը ծավալված մտքերի փոխանակութ յունից յերևում է, վոր մենք այստեղ դործ ունենք հեռեյալ յերեք հիմնական փաստերի հետ :

Առաջին՝ ոտարերկրյա պետութ յունների դործակալների վնասարարական և դիվերսիոն-լրտեսական աշխատանքը, վորոնց թվում բավականաչափ ակտիվ դեր եյին խաղում տրոցկիստները, այս կամ այն չափով շոչափել է մեր բոլոր կամ համարյա բոլոր կազմակերպութ յունները, ինչպես տնտեսական, այնպես ել վարչական ու կուսակցական :

Յերկրորդ՝ ոտարերկրյա պետութ յունների դործակալները, այդ թվում տրոցկիստները, սողոսկել են վոչ միայն ստորին կազմակերպութ յունների, այլև վորոշ պատասխանատու պոստերի մեջ :

Յերրորդ՝ մեր մի քանի ղեկավար ընկերներ ինչպես կենտրոնում, այնպես ել տեղերում, վոչ միայն չկարողացան տեսնել այդ վնասարարների, դիվերսանտների, լրտեսների ու մարդասպանների իսկական դեմքը, այլև այն աստիճան անհոգ, բարեհոգի ու

միամիտ դուրս յեկան, վոր հաճախ իրենք ոժանդակեցին ոտարեղկըյա պետությունների գործակալների այս կամ այն պատասխանատու պոստերը դրավելուն:

Սրանք են այն յերեք անվիճելի փաստերը, վորոնք բնականաբար բղխում են ղեկուցումներից և նրանց շուրջը ծավալված մտքերի փոխանակությունից:

1

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՅՈԳՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞վ բացատրել, վոր մեր ղեկավար ընկերները, վորոնք ամեն տեսակ հակախուսակցական ու հակախորհրդային հոսանքների դեմ մղվող պայքարի հաշուսա փորձ ունեն, տվյալ դեպքում այն աստիճան միամիտ և կույր դուրս յեկան, Վոր, չկարողացան ռեսնել ժողովրդի թշնամիներն իսկական դեմքը, չկարողացան ճանաչել գառան մորթի հագած դայլերին, չկարողացան պոկել նրանց դիմակը:

Կարելի՞ յե արդյոք պնդել, վոր ԽՍՀՄ-ի տերիտորիայի վրա գործող ոտարեղկըյա պետությունների գործակալների վնասարար և դիվերսիոն-լրտեսական աշխատանքը կարող ե մեղ համար ինչ-վոր անսպասելի ու չեղած-չտեսնված բան հանդիսանալ: Վոչ, այդ չի կարելի պնդել: Այդ մասին են խոսում վերջին տարւովա վնասարարական ակտերը՝ ժողովրդական տնտեսության դանազան ճյուղերում, սկսած Շախտիի ժամանակաշրջանից, ակտեր, վորոնք արձանագրված են պաշտոնական փաստաթղթերի մեջ:

Կարելի՞ յե արդյոք պնդել, վոր վերջին ժամա-

նակներս մենք չենք ունեցել վորեւէ նախազգուշացնող  
ազգանշան և նախազգուշացնող ցուցում՝ Փաշիգմի  
արոցկիխտտական-զինույլյեվական գործակալների վնաս-  
սարար, լրտեսական կամ տեւորիտտական գործունե-  
յության վերարերյալ: Վո՛չ, այդ չի կարելի այնպէ՛ս  
Այգպլիսի ազգանշաններ յեղել են, և բուլչեիկներն ի-  
րավունք չունեն մոռանալու դրանց մասին:

Ընկեր Կիրովի չարանենդ սպանությունն առաջն  
լուրջ նախազգուշացումն էր, վորը խոսում էր այն  
մասին, թե ժողովրդի թշնամիները յերկերեսանիւ-  
թյուն կանեն և յերկերեսանիւթյուն անելով քողալ ի-  
վելու յեն բուլչեիկի, կուսակցականի դիմակի տանջ,  
վորպեսզի ամեն զնով վստահություն ձեռք բերեն և  
մեր կազմակերպությունների մեջ իրենց համար ճշ-  
նապարհ բաց անեն:

«Լենինգրադի կենտրոնի» դատավարությունը,  
այնպես, ինչպես «Զինույլյեվի-Կամենեվի» դատավա-  
րությունը, նոր հիմնավորում տվեց ընկեր Կիրովի  
չարանենդ սպանության փաստից բղխող դասերին:

«Զինույլյեվական-արոցկիխտտական բլոկի» դատա-  
վարությունն ընդարձակեց նախորդ դատավարություն-  
ների դասերը, ակնբախտեն ցույց տալով, վոր զինու-  
յլյեվականներն ու արոցկիխտտներն իրենց շուրջն են հա-  
մախմբում բուրբ բուրժուական թշնամի տարրերին,  
վոր նրանք դարձել են գերմանական վոստիկանական  
սրահնորդական բաժնի լրտեսային ու դիվերսիոն-տե-  
ւորիտտական գործակալությունը, վոր յերկերեսանի-  
ությունն ու դիմակավորումը զինույլյեվականների ու  
արոցկիխտտների միակ միջոցն է հանդիսանում մեր  
կազմակերպությունների մեջ սողոսկելու համար, վոր

ղգաստությունն ու քաղաքական սրտանսությունն ամենից ճիշտ միջոցն են հանդիսանում այդպիսի սոցոսկումը կանխելու համար, զինովյեվական-տրոցկիստական ավազակախումբը լիկլիկապիտայի յենթարկելու համար:

Համկ(բ)կ Կենտրոնական Կոմիտեն ընկեր Կիրովի չարանենդ սպանության առթիվ 1935 թվականի հունվարի 18-ին իր ուղարկած փակ նամակում կուսակցական կազմակերպություններին վճռականորեն նախապդուշացնում էր քաղաքական բարեհոգությունից և քաղքենիական բերանարացությունից: Փակ նամակում ասված է.

«Պետք է վերջ տալ ոպորտունիստական բարեհոգությանը, վորը բղխում է այն սխալ յենթադրությունից, թե մեր ուժերի աճմանը զուգընթաց՝ թշնամին իրը թե գնալով ավելի ձեռնասուն ու անվնաս է դառնում: Ս.յդպիսի յենթադրությունն արմատապես սխալ է: Դա աջ թեքման բղկոցն է, թեքում, վորն աշխատում է բոլորին ու ամենքին համոզել, թե թշնամիները կամացուկ կներսողան սոցիալիզմի մեջ, թե նրանք վերջիվերջո իսկական սոցիալիստներ կդառնան: Բոլշևիկները դործը չեն նիրհել դափնիների վրա և բերանարացություն անել: Մեզ վոչ թե բարեհոգություն է հարկավոր, այլ զղաստություն, իսկական բոլշևիկյան հեղափոխական զղաստություն: Պետք է հիշել, վոր վորքան ավելի անհուսալի յե թշնամիները դրությունը, նրանք այնքան ավելի սիրով են դիմելու ծայրահեղ միջոցների, վորպես դատապարտվածների միակ միջոցների՝ խորհրդային

Իշխանության դեմ իրենց մղած պայքարում և Պետք ե հիշել այդ և զգաստ լինել»:

Տրոցկիստական-գլխավորական բլոկի լրտեսային-անուորիստական գործունեյության առթիվ 1936 թվականի հունիսի 29-ին գրած իր փակ նամակում ՀամԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն նորից կոչ եր անում կուսակցական կազմակերպություններին՝ ցուցաբերել առավելագույն զգաստություն, կարողանալ ճանաչել ժողովրդի թշնամիներին, վորքան ել լավ դիմակալորված լինեն նրանք: Փակ նամակում ասված ե.

«Այժմ, յերբ ասպացուցված ե, վոր տրոցկիստական-գլխավորական ճիւղները խորհրդային իշխանության դեմ մղվող պայքարում միացնում են մեր յերկրի աշխատավորության բոլոր ամենազազազած ու վրիթերիմ թշնամիներին, — լրտեսներին, պրովոկատորներին, գլխերսանտներին, սպիտակ-գվարդիականներին, կուլակներին և այլն, յերբ մի կողմից այդ տարրերի և մյուս կողմից տրոցկիստների ու գլխավորականների միջև ջնջվել են բոլոր սահմանները, — մեր բոլոր կուսակցական կազմակերպությունները, կուսակցության բոլոր անդամները պետք ե հասկանան, վոր կոմունիստների զգաստությունն անհրաժեշտ ե ամեն մի ճակատամասում և ամեն մի իրադրության մեջ: Յուրաքանչյուր բոլշևիկի անկապտելի հատկությունը ներկա պայմաններում պետք ե լինի կուսակցության թշնամուն ճանաչել կարողանալը, վորքան ել լավ դիմակալորված լինինա»:

Նշանակում են՝ ազգանշաններ ու նախազգուշացումներ յեղել են:

Ի՞նչ բանի էյին՝ կոչ անում այդ ազգանշաններն ու նախազգուշացումները:

Գրանք կոչ էյին անում, վարդեսդի վերացվի կուսակցական-կազմակերպական աշխատանքի թուլությունը և կուսակցությունը դարձվի մի անուսիկ ամբողջ, վերանդ վոչ մի յերկերեսանի չկարողանար մուտք դործել:

Գրանք կոչ էյին անում, վարդեսդի վերջ արվի կուսակցական-քաղաքական աշխատանքի թերազնահատմանը և վնասական շրջադարձ կատարվի այդ աշխատանքն ամեն կերպ ուժեղացնելու կողմը, քաղաքական դպաստությունն ուժեղացնելու կողմը:

Յեւ ի՞նչ: Փաստերը ցույց տվին, վոր մեր ընկերներն տվելի քան գծվարությամբ են ըմբռնել ազգանշաններն ու նախազգուշացումները:

Այդ մասին պերճախոս կերպով վկայում են կուսակցական փաստաթղթերի ստուգման և փոխանակման կամուրանիստի բնագաղափարի վերաբերյալ բոլորին հայտնի փաստերը:

Ինչո՞վ բացատրել այն, վոր այդ նախազգուշացումներն ու ազգանշանները պատշաճ ներդործություն չունեցան:

Ինչո՞վ բացատրել այն, վոր մեր կուսակցական ընկերները, չնայած հակախորհրդային տարրերի դեմ պայքարելու իրենց փորձառությանը, չնայած մի ամբողջ շարք նախազգուշացնող ազգանշաններին և նախազգուշացնող ցուցումներին, քաղաքականապես կարձաատես դուրս յեկան ժողովրդի թշնամիների վնասա-

րար և լրտեսային-դիվերսիոն աշխատանքի հանդեպ  
Գուցե մեր կուսակցական ընկերներն ալեկի վա՞ս  
են դարձել, քան առաջ ելին, ալեկի պահա՞ս դիտա-  
կից ու կարգապահ են դարձել: Վո՞չ, իհարկե, վո՞չ:

Գուցե նրանք սկսել են վերասերվե՞լ: Դարձյա՞լ  
վոչ: Այդպիսի յենթադրությունը դուրի և մորեն հիմ-  
քից:

Ուրեմն ինչո՞ւմն և բանը: Վո՞րտեղից են այդ բե-  
րանարացությունը, անհողությունը, բարենհողությու-  
նը, կուրությունը:

Բանն այն և, վոր մեր կուսակցական ընկերները  
տարված լինելով անտեսական կամպանիաներով և  
վիթխարի հաջողություններով՝ անտեսական շինարա-  
րության ճակատում, պարզապես մոռացել են այն մի-  
ջանի շատ կարևոր փաստերի մասին, վորոնց մասին  
բոլշևիկներն իրավունք չունեն մոռանալու: Նրանք մո-  
ռացել են մի հիմնական փաստի մասին ՌՍՀՄ-ի մի-  
ջադպային դրության ասպարեղից և չեն նկատել յեր-  
կու շատ կարևոր փաստեր, վորոնք ուղղակի առնչու-  
թյուն ունեն կուսակցական տոմսով քողարկվող և  
վորպես բոլշևիկ դիմակավորվող այժմյան վնասա-  
րարների, լրտեսների, դիվերսանտների ու մարգա-  
սպանների հետ:

## II

### ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԾՐՋԱՊԱՏՈՒՄԸ

Այդ ի՞նչ փաստեր են, վորոնց մասին մոռացել են  
կամ վորոնք պարզապես չեն նկատել մեր կուսակցա-  
կան ընկերները:

Նրանք մոռացել են այն մասին, վոր խորհրդային լիշխանությունը հաղթել և աշխարհի միայն մի վեցերորդ մասում, վոր աշխարհի հինգ վեցերորդ մասը կազմում են կապիտալիստական պետությունները ալրապետությունները: Նրանք մոռացել են, վոր Սորհրդային Միությունը գտնվում և կապիտալիստական շրջապատման պայմաններում: Մեզանում ընդունված և շաղակրատել կապիտալիստական շրջապատման մասին, բայց չեն ուղում խորանալ, թե ի՞նչ բան և այդ— կապիտալիստական շրջապատումը: Կապիտալիստական շրջապատումը—այդ դատարկ Ֆրազ չե, այդ շատ ունալ և անախորժ մի յերևույթ և: Կապիտալիստական շրջապատումը—այդ նշանակում և, վոր կա մի յերկիր—Սորհրդային Միությունը, վորն իր մոտ սոցիալիստական կարգեր և հաստատել, և, բացի դրանից, կան շատ յերկիրներ—բուրժուական յերկիրներ—վորոնք շարունակում և կապիտալիստական կյանք վարել և վորոնք շրջապատում են Սորհրդային Միությունը, առիթի սպասելով, վորպեսզի հարձակվեն նրա վրա, ջախջախեն նրան կամ, համենայն դեպս, խարխուլեն նրա հզորությունը և թուլացնեն նրան:

Այդ հիմնական փաստի մասին են մոռացել մեր ընկերները: Բայց չե՞ վոր հենց այդ և, վոր վորոշում և կապիտալիստական շրջապատման և Սորհրդային Միության փոխհարաբերությունների հիմքը:

Վերցնենք, որինակ, բուրժուական պետությունները: Միամիտ մարդիկ կարող են կարծել, թե նրանց միջև դոյություն ունեն բացառապես բարի հարաբերություններ, վորպես միատիպ պետությունների միջև: Բայց այդպես կարող են կարծել միմիայն միա-

միտ մարդիկ: Իրոք նրանց փոխհարարերություններն  
ավելի քան հեռու յեն բարի-դրացիական հարարերու-  
թյուններ լինելուց: Ապացուցված է, վորպես յերկու  
անգամ յերկու—չորս, վոր բուրժուական պետու-  
թյունները միմյանց թիկունքն են ուղարկում իրենց  
լրտեսներին, վնասարարներին, դիվերսանտներին, իսկ  
յերբեմն ել մարդասպաններին, նրանց առաջադրանք  
են տալիս՝ բուն դնել այդ պետությունների հիմնարկ-  
ներում ու ձեռնարկություններում, ստեղծել այնտեղ  
իրենց ցանցը և «անհրաժեշտության դեպքում» սյոյ-  
թեցնել նրանց թիկունքները, վորպեսզի թուլացնեն  
նրանց և խարխլեն նրանց հզորությունը: Այդպես է  
բանը ներկայումս: Բանն այդպես է յեղել նաև անցյա-  
լում: Վերցնենք, որինակ, Յեվրոպայի՝ Նապոլեոն ա-  
ռաջինի ժամանակվա պետությունները: Փրանսիայում  
այդ ժամանակները վխտում եյին լրտեսներն ու դի-  
վերսանտները՝ ուսուցիչ, դերմանացիներ, ավստ-  
րիացիներ, անգլիացիների բանակից: Յեվ, ընդհա-  
կառակը, Անգլիան, դերմանական պետությունները,  
Ավստրիան, Ռուսաստանն իրենց թիկունքում այն ժա-  
մանակ ունեյին վոչ պակաս թվով լրտեսներ ու դիվեր-  
սանտներ՝ Փրանսիական բանակից: Անգլիայի դործա-  
կալները յերկու անգամ մահափորձ են կատարել Նա-  
պոլեոնի կյանքի դեմ և մի քանի անգամ վտարի յեն  
հանել Վանդեայի դյուղացիներին Փրանսիայում՝ Նա-  
պոլեոնի կառավարության դեմ: Իսկ ի՞նչ եր ներկա-  
յացնում Նապոլեոնի կառավարությունը: Բուրժուա-  
կան մի կառավարություն, վորը խեղդեց Փրանսա-  
կան հեղափոխությունը և պահպանեց հեղափոխու-  
թյան միայն այն արդյունքները, վորոնք ձեռնտու է-

յին ինչոր բուրժուազիային: Ինչ խոտք, զոր Նապո-  
լեոնի կառավարությունը պարտքի տակ չէր մնում իր  
հարեաններէ վերաբերմամբ և նույնպէս ճեռնարկում  
էր իր դիվերսիոն միջոցառումները: Այդպէս եր  
անցյալում, 130 տարի առաջ: Այդպէս է՝ բանը ներ-  
կայումս, Նապոլեոն առաջինից 130 տարի հետո: Այժմ  
Փրանսիայում և Անգլիայում վխտում են գերմանական  
լրտեսներն ու դիվերսանտները և, ընդհակառակը,  
Գերմանիայում, իրենց հերթին, դործում են անգլո-  
Փրանսական լրտեսներն ու դիվերսանտները: Ամերի-  
կայում վխտում են ճապոնական լրտեսներն ու դի-  
վերսանտները, իսկ Ճապոնիայում՝ ամերիկականնե-  
րը:

Այս է բուրժուական պետությունների փոխհարա-  
բերությունների որինքը:

Հարց է ծագում, թե ինչո՞ւ բուրժուական պետու-  
թյունները խորհրդային սոցիալիստական պետությա-  
նը պետք է ավելի մեղմ ու ավելի բարի-դրացիաբար  
վերաբերվեն, քան նույնատիպ բուրժուական պետու-  
թյուններին: Ինչո՞ւ պետք է նրանք Խորհրդային Մի-  
ության թիկունքներն ավելի պակաս թվով լրտեսներ,  
վնասարարներ, դիվերսանտներ ու մարդասպաններ ու-  
ղարկին, քան ուղարկում են իրենց ազդակից բուր-  
ժուական պետությունների թիկունքները: Վո՞րտեղից  
էք դուք այդ վերցրել: Մարքսիզմի անասկետից ավե-  
լի ճիշտ չէ՞ լինի արդյոք յինթադրել, զոր բուրժուա-  
կան պետությունները Խորհրդային Միության թի-  
կունքները պետք է ուղարկեն կրկնակի ու յեռակի ա-  
վելի վնասարարներ, լրտեսներ, դիվերսանտներ, ու

մարդասպաններ, քան վորեն ըուրժուտեան պետու-  
թյան թիկունքները:

Պարզ չե՞ արդյոք, վոր քանի գոյություն ունի  
կապիտալիստական շրջապատումը, մեղանում գոյու-  
թյուն են ունենալու վնասարարներ, լրտեսներ, դի-  
վերսանտներ ու մարդասպաններ, վորոնց մեր թի-  
կունքներն են ուղարկում ստաբիլիզյա պետություննե-  
րի գործակալները:

Այս ամենի մասին մոռացել են մեր կուսակցական  
ընկերները, և մոռանալով այդ մասին՝ հանկարծակիի  
յեկած յեղան:

Ահա թե ինչու Քաստն-դերմանախան վոստիկա-  
նական պահապուղական բաժնի արոցկիստական գործա-  
կալների լրտեսային-դիվերսիոն աշխատանքը մեր վո-  
րոշ ընկերների համար ըուլորովին անսպասելի բան  
գուրս յեկավ:

### III

## ԱՐԴԻ ՏՐՈՑԿԻՉՍԸ

Այնուհետև: Պայքար մղելով արոցկիստական գոր-  
ծակալների դեմ՝ մեր կուսակցական ընկերները չեն  
նկատել, նրանց աչքից վրիպել և, վոր այժմյան արոց-  
կիզմն արդեն այն չե, ինչ նա յեղել և, ասենք, որանից  
Գ—Ց տարի առաջ, վոր արոցկիզմը և արոցկիստներն  
այդ ժամանակում չինթարկվել են ըուրջ եվուլուցիայի,  
վորն արմատապես փոխել և արոցկիզմի դեմքը, վոր,  
նկատի ունենալով այդ, արոցկիզմի դեմ մղվող պար-  
քարն եչ, նրա դեմ պայքարելու մեթոդներն ել, պետց

ե արժատապես փոխվին: Մեր կուսակցական ընկերները չեն նկատել, վոր արոցկիզմը դադարել է բանվոր դասակարգի ներսում քաղաքական հոսանք լինելուց, վոր արոցկիզմը բանվոր դասակարգի ներսում քաղաքական հոսանք լինելուց, ինչպիսին եր նա սրանից մի 7—8 տարի առաջ, վեր է ածվել այնպիսի վնասարարների, դիվերսանտների, լրտեսների ու մարդասպանների մերկապարանոց ու անսկզբունք մի բանդայի, վորոնք գործում են ոտարերկրյա պետությունների հետախուզական որդանների առաջադրանքներով:

Ի՞նչ բան է քաղաքական հոսանքը բանվոր դասակարգի ներսում: Քաղաքական հոսանքը բանվոր դասակարգի ներսում—դա մի այնպիսի խումբ կամ կուսակցություն է, վորն ունի իր վորոշակի քաղաքական կերպարանքը, պլատֆորմը, ծրագիրը, վորը չի թաղցնում և չի կարող թաղցնել իր հայացքները բանվոր դասակարգից, այլ ընդհակառակը, իր հայացքները պրոպագանդա յե անում բացեկրաց ու աղնվորեն, բանվոր դասակարգի աչքերի առջև, վորը չի վախենում իր քաղաքական դեմքը բանվոր դասակարգին ցույց տալուց, չի վախենում իր իսկական նպատակներն ու խնդիրները բանվոր դասակարգի առջև ցուցադրելուց, այլ ընդհակառակը, բացահայտ ու ազնիվ կերպով զնում է բանվոր դասակարգի մեջ նրա համար, վորպեսզի նրան համոզի իր հայացքների ճշմարիտ լինելը: Տրոցկիզմն անցյալում, մի 7—8 տարի սրանից առաջ, այդպիսի քաղաքական հոսանքներից մեկն էր բանվոր դասակարգի ներսում, ճշմարիտ է, հակալենինյան և այդ պատճառով ել խորապես սխալ, բայց այնուամենայնիվ քաղաքական հոսանք:

II  
A 6933  
1047

Կարելի՞ք յի արդյոք ասել, վոր այժմյան տրոց-  
կիզմը, ասենք 1936 թվականի տրոցկիզմը, քաղաքա-  
կան հոսանք և հանդիսանում բանվոր դասակարգի  
ներսում: Վո՞չ, այդ բանը չի կարելի ասել: Ինչո՞ւ:  
Վորովհետև արդի տրոցկիսաները վախենում են իրենց  
խկական դեմքը բանվոր դասակարգին ցույց տալուց,  
վախենում են նրա առջև իրենց խկական նպատակներն  
ու խնդիրները բաց անելուց, խնամքով թաղցնում են  
բանվոր դասակարգից իրենց քաղաքական կերպարան-  
քը, վախենալով, վոր յեթե բանվոր դասակարգն իմա-  
նա իրենց խկական մտադրությունները, կնզովի նը-  
բանց, վորպես խորթ մարդկանց և նրանց կքչի իրե-  
նից: Դրանով ել խկապես բացատրվում և այն, վոր  
տրոցկիսական աշխատանքի հիմնական մեթոդն այժմ  
հանդիսանում և վոչ թե իրենց հայացքների բացա-  
հայտ ու աղնիվ պրոպագանդան բանվոր դասակարգի  
մեջ, այլ իրենց հայացքների քողարկումը, իրենց հա-  
կառակորդների հայացքների ստորաքարչ ու քծնուպա-  
կան դավարանումը, իրենց սեփական հայացքների  
վարիսեցիական ու կեղծ կոխկրտումը ցեխի մեջ:

1936 թվականի դատավարության ժամանակ, յե-  
թե հիշում եք, Կամենեվն ու Զինովյեվը վճռականո-  
րեն ժխտում էյին, վոր իրենք վորեւ քաղաքական  
պլատֆորմ ունեն: Նրանք լիակատար հնարավորու-  
թյուն ունեյին դատավարության ժամանակ ծավալե-  
լու իրենց քաղաքական պլատֆորմը: Սակայն նրանք  
այդ չարին, հայտարարելով, վոր իրենք վոչ մի քա-  
ղաքական պլատֆորմ չունեն: Վոչմի կասկած չի կարող  
լինել, վոր նրանք յերկուսն ել ստում էյին, ժխտելով  
իրենց պլատֆորմ ունենալը: Այժմ նույնիսկ կույրերը



տեսնում են, վոր նրանք ունեցել են իրենց քաղաքա-  
կան պլատֆորմը: Բայց նրանք ինչո՞ւ եյին ժխտում  
իրենց վորեւե քաղաքական պլատֆորմ ունենալը: Վո-  
րովհետեւ նրանք վախենում եյին իրենց իսկական քա-  
ղաքական դեմքը բաց անելուց, նրանք վախենում եյին  
ԽՍՀՄ-ում կապիտալիզմի սեռատարացիայի իրենց  
իսկական պլատֆորմը ցուցադրելուց, վախենալով, վոր  
այդպիսի պլատֆորմը զղվանք կառաջացնի բանվոր  
դասակարգի մեջ:

1937 թվականի դատավարութեան Ժամանակ Պյո-  
տակովը, Ռադեկը և Սոկոլնիկովը կանգնեցին այլ ու-  
ղու վրա: Նրանք չեյին ժխտում, վոր արոցկիսաներն  
ու ղինովյեվականները քաղաքական պլատֆորմ ունեն-  
ն: Նրանք ընդունեցին, վոր իրենք վորոշակի քաղաքա-  
կան պլատֆորմ ունեն, ընդունեցին և այդ պլատֆորմը  
ծավալեցին իրենց ցուցմունքների մեջ: Բայց ծավալե-  
ցին այն վոչ թե նրա համար, վոր կոչ անեն բանվոր  
դասակարգին, կոչ անեն ժողովրդին՝ պաշտպանելու  
արոցկիստական պլատֆորմը, այլ նրա համար, վոր ա-  
նիծեն և նշափակեն այն վորպես հակաժողովրդական և  
հակապրոլետարական մի պլատֆորմ: Կապիտալիզմի  
սեռատարացիա, կոլտնտեսութեանների ու խորհունտե-  
սութեանների լիկվիդացիա, շահադործման սխտեմի  
վերականգնում, դաշինք Գերմանիայի ու Ծապոնիայի  
Փաշլոտական ուժերի հետ՝ Խորհրդային Միութեան  
դեմ պատերազմը մոտեցնելու համար, հանուն պատե-  
րազմի և խաղաղութեան քաղաքականութեան դեմ  
պայքարելու համար, Խորհրդային Միութեան տերի-  
տորիալ անդամահատում՝ հանձնելով Ուկրաինան  
գերմանացիներին, իսկ Պրիմորյեն՝ ճապոնացիներին:

Յորհրդային Միութեան ռազմական պարտութեան նա-  
խապարտատու՝ թշնամի պետութեաննների նրա վրա  
հարձակվելու դեպքում և՛ վորպես այդ ինգլիզներն  
իրագործելու միջոց՝ վնասաբարութեուն, գլխերսիա,  
անհատական տեղոր խորհրդային իշխանութեան ղեկա-  
վարներին դեմ, լրատութեուն հողուտ գերման-ճապո-  
նական Փաշխտական ուժերի— այս և այժմյան տրոց-  
կիդմի ջաղաքական այն պլատֆորմը, վորը ծավալեցին  
Պյատակովը, Ռադեկը և Սոկոլնիկովը: Հասկանալի  
յե, վոր այդպիսի պլատֆորմը տրոցիկիստները չեյին  
կարող չթագցնել ժողովրդից, բանվոր դատակարգից:  
Յեվ նրանք այն թագցնում եյին վոչ միայն բանվոր  
դատակարգից, այլ նաև տրոցիկիստական մասսայից, և  
վոչ միայն տրոցիկիստական մասսայից, այլ նույնիսկ  
գեկավար տրոցիկիստական վերնախավից, վորը բաղկա-  
ցած եր 30-40 հողուց կազմված մարդկանց փոքրաթիվ  
խմբակից: Յերբ Ռադեկն ու Պյատակովը Տրոցիուց  
թուլլովութեուն են պահանջել տրոցիկիստների 30-40  
հողուց բաղկացած փոքրիկ կոնֆերենցիա գումարելու՝  
այդ պլատֆորմի բնույթի մասին ինֆորմացիա տալու  
համար, Տրոցիին այդ արգելել և նրանց, ասելով, թե  
նպատակահարմար չի պլատֆորմի իրական բնույթի  
մասին խոսել տրոցիկիստների նույնիսկ փոքրիկ խմբա-  
կի հետ, վորովհետև նման «սպերացիան» կարող և պա-  
ռակտում առաջացնել:

«Քաղաքական գործիչներ», վորոնք թագցնում  
են իրենց հայացքները, իրենց պլատֆորմը վոչ միայն  
բանվոր դատակարգից, այլ նաև տրոցիկիստական մաս-  
սայից, և վոչ միայն տրոցիկիստական մասսայից, այլ

նաև տրոցկիստները ղեկավար վերնախավից—այս և արդի տրոցկիզմի կերպարանքը:

Բայց դրանից բղխում է, վոր արդի տրոցկիզմն այլևս չի կարելի քաղաքական հոսանք անվանել բան—վոր դասակարգի մեջ:

Արդի տրոցկիզմը քաղաքական հոսանք չէ բանվոր դասակարգի մեջ, այլ վնասարարների, դիվերսանտների, հետախույզների, լրտեսների, մարդասպանների մի անսկզբունք և զաղափարազուրկ բանդա, բանվոր դասակարգի վտխերիմ թշնամիների մի բանդա, վորոնք ոտաբերկրյա պետությունների հետախուզական ուղանները մոտ գործում են վարձով:

Այս է տրոցկիզմի վերջին 7-8 տարվա եվոլուցիայի անսխիճելի արդյունքը:

Այս է տարբերությունն անցյալի տրոցկիզմի և այժմյան տրոցկիզմի միջև:

Մեր կուսակցական ընկերների սխալն այն է, վոր նրանք չեն նկատել անցյալի տրոցկիզմի և այժմյան տրոցկիզմի այդ խոր տարբերությունը: Նրանք չեն նկատել, վոր տրոցկիստներն արդեն վաղուց զաղարել են զաղափարական մարդիկ լինելուց, վոր տրոցկիստներն արդեն վաղուց զարձել են մեծ ճանապարհի ավազակներ՝ ընդունակ ամեն մի դարչելիության, ընդունակ ամեն մի նողկալիության, կիպ մինչև լրտեսություն ու իրենց հայրենիքին ուղղակի դավաճանելը, միայն թե կարողանան վատություն անել խորհրդային պետությանը և խորհրդային իշխանությանը: Նրանք այդ չնկատեցին, ուստի և չկարողացան իր ժամանակին վերակառուցվել, վորպեսզի պայ-

քար մղեն տրոցկիստների դեմ նոր ձեռով, ավելի վճռաբար:

Ահա թե ինչու տրոցկիստները վերջին տարիների նողկալիությունները մեր միքանի կուսակցական ընկերների համար կատարյալ անակնկալ հանդիսացան:

Այնուհետև: Վերջապես, մեր կուսակցական ընկերները չեն նկատել այն, վոր ելական տարբերություն կա մի կողմից այժմյան վնասարարների ու դիվերսանտների միջև, վորոնց մեջ Ֆաշիզմի տրոցկիստական գործակալները բավական ակտիվ դեր են խաղում, և մյուս կողմից Շախտիի ժամանակների վնասարարների ու դիվերսանտների միջև:

Առաջին: Շախտիականները և արդյունարերական կուսակցության անդամները մեզ համար բացահայտորեն խորթ մարդիկ ելին: Նրանք մեծ մասամբ նախկին ձեռնարկատերեր ելին, հին տերերի ժամանակվա նախկին կառավարիչներ, հին փայտերական ընկերությունների նախկին անդամներ, կամ պարզապես հին բուրժուական մասնագետներ, վորոնք քաղաքականապես բացահայտորեն թշնամի ելին մեզ: Մեր մարդկանցից վոչ վոք չեր տարակուսում այդ պարոնների քաղաքական դեմքի իսկության նկատմամբ: Ասենք, շախտիականներն իրենք ել չեյին թողցնում իրենց թշնամական վերաբերմունքը խորհրդային հասարակարգի նկատմամբ: Չի կարելի նույնն ասել այժմյան վնասարարների ու դիվերսանտների, տրոցկիստների մասին: Այժմյան վնասարարներն ու դիվերսանտները, տրոցկիստները, դրանք մեծ մասամբ զրպանում կուսակցական տոմս ունեցող կուսակցական մարդիկ են, — հե-

տևարար, ձևականորեն վոչ խորթ մարդիկ: Յեթե հին վնասարարները մեր մարդկանց դեմ ելին դնում, ապա նոր վնասարարները, ընդհակառակը, քծնում են մեր մարդկանց առջև, դավարանում են մեր մարդկանց, ասորաքարչություն են անում նրանց առջև՝ նրա համար, վորպեսզի վստահություն ձեռք բերեն: Ինչպես տեսնում եք, սարքերությունն էյակիան է:

Յերկրորդ: Շախտիականների և արդյունարեղական կուսակցության անդամների ուժն այն եր, վոր երանք ավելի կամ պակաս չափով անհրաժեշտ տեխնիկական գիտելիքների տեր ելին, մինչդեռ մեր մարդիկ, վորոնք չունենին այդպիսի գիտելիքներ, հարկազրկած ելին սովորել նրանցից: Այդ հանգամանքը Շախտի ժամանակաշրջանի վնասարարներին մեծ առավելություն եր տալիս, նրանց հնարավորություն եր տալիս վնասարարություն անելու ազատ ու անարգել, նրանց հնարավորություն եր տալիս մեր մարդկանց խաբելու տեխնիկապես: Նույնը չեն այժմյան վնասարարները, տրոցկիստները: Այժմյան վնասարարները վոչ մի տեխնիկական առավելություն չունեն մեր մարդկանց համեմատությամբ: Ընդհակառակը, տեխնիկապես մեր մարդիկ ավելի պատրաստված են, քան այժմյան վնասարարները, քան տրոցկիստները: Շախտի ժամանակաշրջանից մինչև մեր օրերն անցած ժամանակվա ընթացքում մեզ մոտ անել են տասնյակ հազարավոր իսկական, տեխնիկապես կոլոված բոլշևիկյան կադրեր: Կարելի չեք հիշատակել հազարավոր ու տասնյակ հազարավոր տեխնիկապես աճած բոլշևիկյան ղեկավարների, վորոնց համեմատությամբ այդ բոլոր Չյասակովներն ու Լիվիցիները:

Շեռտոյններն ու Բողոքարձակիչները, Մուրալոյններն ու  
Գրորնիսները դատարի շաղակրատներ և նախապատ-  
րատական դատարանի աշակերտներ են տեխնիկական  
պատրաստութեան տեսակետից: Այդ դեպքում ինչի՞ն  
մեջ և արդի վնասարարների, արոցկիւսաների ուժը:  
Նրանց ուժը կուսակցական տամսի մեջ, կուսակցական  
տամս ունենալու մեջ է: Նրանց ուժն այն է, վոր կու-  
սակցական տամսը քաղաքական վստահութիւնն է  
սալիս նրանց և նրանց համար մուտք է բաց անում  
դեպի մեր բոլոր հիմնարկներն ու կազմակերպու-  
թիւնները: Նրանց ստավելութիւնն այն է, վոր կու-  
սակցական տամս ունենալով և իրենց խորհրդային իշ-  
խանութեան բարեկամ ձեռքներով, նրանք խաբում  
էյին մեր մարդկանց Բաղաճակաւնապետ, ի շարն էյին  
գործ դնում վստահութիւնը, վնասարարութիւնն էյին  
անում սուսուփուս և մեր պետական գաղանխները  
հայանում Խորհրդային Միութեան թշնամիներին: Մի  
«ստավելութիւն», վորը կասկածելի չն էր քաղաքա-  
կան ու բարոյական արժեքով, բայց այնուամենայնիվ  
«ստավելութիւն» է: Այդ «ստավելութեամբ» ել հենց  
բացատրվում է այն հանդամանքը, վոր արոցկիւսա-  
կան վնասարարները, վորպէս կուստամսովոր մարդիկ,  
վորոնք մուտք ունեյին մեր հիմնարկներն ու կազմա-  
կերպութիւններն բոլոր տեղերը, ուղղակի գյուտ  
հանդիսացան ոտարիերէյա պետութիւններէ հեռա-  
խուզական որդանների համար:

Մեր վորոշ կուսակցական ընկերներն սխալն այն  
է, վոր նրանք չեն նկատել, չեն հասկացել հին և նոր  
վնասարարների միջև, շախտիականների ու արոց-  
կիւսաների միջև յեղած այդ ամբողջ սարբերութիւնը

և, չնկատելով այդ, չեն կարողացել ժամանակին վերակառուցվել նոր վնասարարները դեմ նոր ձևով սպառնալիք մղելու համար:

## IV

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՎԵՐՈՏ ԿՈՂՄԵՐԸ

Սրանք են մեր միջազգային ու ներքին դրուժյան բնազավառից վերցված հիմնական փաստերը, վորոնց մասին մոռացել են կամ վորոնք չեն նկատել մեր շատ կուսակցական ընկերներ:

Ահա թե ինչու մեր մարդիկ հանկարծակիի յեկան վնասարարության և դիվերսիայի դործում վերջին տարիներս սեղի ունեցած դեպքերից:

Կարող են հարց տալ. բայց ինչո՞ւ մեր մարդիկ չեն նկատել այդ ամենը, ինչո՞ւ նրանք մոռացել են այդ ամենի մասին:

Վո՞րտեղից առաջ յեկան այդ բոլորը՝ մոռացկոտությունը, կուրուժյունը, անհողությունը, բարեհոգությունը:

Այդ մի որդանական արատ չե՞ արդյոք մեր մարդկանց աշխատանքի մեջ:

Վո՞չ, այդ որդանական արատ չե: Այդ—ժամանակավոր յերևույթ ե, վորը կարող ե արագորեն լիկվիդացիայի յենթարկվել մեր մարդկանց կողմից վորոշ ջանքերի առկայության դեպքում:

Ուրեմն ինչո՞ւմն ե բանը:

Բանն այն ե, վոր մեր կուսակցական ընկերները

վերջին տարիներում ամբողջապես կլանված են յեղել տնտեսական աշխատանքով, նրանք ծայր աստիճանի տարված են յեղել տնտեսական հաջողութուններով, և տարված լինելով այդ ամբողջ գործով, մոռացել են մնացած ամեն բանի մասին, յերեսի վրա յեն թողել ըսր մնացածը:

Բանն այն է, վոր տարված լինելով տնտեսական հաջողութուններով, նրանք այդ գործի մեջ սկսեցին տեսնել ամեն բանի սկիզբն և վերջը. իսկ այնպիսի գործերին, ինչպիսիք են Սորհրդային Միության միջազգային դրությունը, կապիտալիստական շրջապատումը, կուսակցության քաղաքական աշխատանքի ուժեղացումը, սոյաքարը վնասարարության դեմ և այլն, սարգսպես սկսեցին ուշադրություն չդարձնել, կարծելով, վոր այդ ըսր հարցերը յերկրորդական կամ նույնիսկ յերրորդական գործ են ներկայացնում:

Հաջողութունները և նվաճումներն իհարկե մեծ գործ են: Մեր հաջողութունները սոցիալիստական շինարարության բնագավառում՝ իսկապես հսկայական են: Բայց հաջողութունները, ինչպես և աշխարհում ամեն բան, ունեն նաև իրենց սովորոտ կողմերը: Գաղաքականության մեջ քիչ փորձառություն ունեցող մարդկանց մոտ մեծ հաջողութուններն ու մեծ նվաճումները հաճախ ծնում են անհողություն, բարեհողություն, ինքնազոհություն, չափից դուրս ինքնավստահություն, ամբարտավանություն, սարծենկոտություն: Դուք չեք կարող ժխտել, վոր վերջին ժամանակներս մեզանում անթիվ ու անհամար սարծենկոտներ են յերևացել: Զարմանալի չէ, վոր սոցիալիստական շինարարության բնագավառում ձեռք բերված

մեծ ու լուրջ հաջողութիւններն այս լրատուութեան մեջ ստեղծվում են պարծենկոտութեան տրամադրութիւններ, մեր հաջողութիւններն պարագային մանկֆեստացիայի տրամադրութիւններ, ստեղծվում են մեր թշնամիների ուժերը թերազնահաստելու տրամադրութիւններ, մեր ուժերը դերազնահաստելու տրամադրութիւններ, և վորպէս այդ ամենի հետեանը— յերեան և դալիս քաղաքական կուրութիւնը:

Այստեղ յես պետք է մի քանի խոսք ստեմ հաջողութիւններն հետ կապված վտանգների մասին, նվաճումների հետ կապված վտանգների մասին:

Դժվարութիւններն հետ կապված վտանգներն մասին մենք վորճով զիտենք: Ահա արդեն մի քանի տարի յես, վոր պայքար ենք մղում այդ տեսակ վտանգների դեմ և պետք է ստեղ՝ վոչ առանց հաջողութեան: Վոչ-կայուն մարդկանց մոտ դժվարութիւնների հետ կապված վտանգները հաճախ առաջ են բերում վհատութեան, իր ուժերին չհավատալու տրամադրութիւններ, հոռետեսութեան տրամադրութիւններ: Յեւ, ընդհակառակը, այնտեղ, վորտեղ դորձը վերաբերում է դժվարութիւններից բղխող վտանգները հաղթահարելուն, մարդիկ կոխվում են այդ պայքարում և պայքարից դուրս են գալիս վորպէս իրօք սրողպատակուռ բոլշևիկներ: Այս է դժվարութիւնների հետ կապված վտանգների բնութիւնը: Սրանք են դժվարութիւնների հաղթահարման արդյունքները:

Իայց կան այլ տեսակ վտանգներ, հաջողութեանների հետ կապված վտանգներ, նվաճումների հետ կապված վտանգներ: Այո՛, այո՛, ընկերներ՛ր, հաջողու-

Թյունները հետ, նվաճումների հետ կապված վտանգները: Այդ վտանգների ելությունն այն է, Վոր քաղաքականութան մեջ քիչ փորձված և շատ բան չտեսած մարդկանց մոտ հաջողությունների իրադրությունը, — հաջողություն՝ հաջողության հետևից, նվաճում՝ նրվածման հետևից, պլանների գերակատարում՝ գերակատարման հետևից, — առաջ է բերում անհողության ու ինքնագոհության արամադրություններ, ստեղծում է սարազային հանդեսների և փոխադարձ վողջույնների միջնորդ, վորոնք սպանում են չափի զգացումը և բթացնում քաղաքական հոտառությունը, ապամագնիսացնում են մարդկանց և մղում դեպի այն, Վոր ներհեն դասիները վրա:

Զարմանալի չէ, Վոր ամբարտավանության և ինքնագոհության այդ արբեցնող միջնորդտում, պարագային մանիֆեստացիաների և աղմկալից ինքնագովության միջնորդտում մարդիկ մոռանում են մեր յերկրի ճակատագրի համար առաջնակարգ նշանակություն ունեցող մի քանի ելական փաստերի մասին, մարդիկ սկսում են չնկատել այդպիսի անախտ փաստերը, ինչպիսիք են կապիտալիստական շրջապատումը, վնասարարության նոր ձևերը, մեր հաջողությունների հետ կապված վտանգները և այլն: Կապիտալիստական շրջապատում: Բայց չէ՞ Վոր դա դատարկ բան է: Ի՞նչ նշանակություն կարող է ունենալ ինչ—Վոր կապիտալիստական շրջապատում, յեթե մենք կատարում ու գերակատարում ենք մեր անտեսական պլանները: Վնասարարության նոր ձևեր, պայքար արոցկիզմի դեմ: Այդ բոլորը դատարկ բաներ են: Ի՞նչ նշանակություն կարող է ունենալ այդ բոլոր մանրույնը, յերբ մենք

կատարում ու գերակատարում ենք մեր անտեսական պլանները: Կուսակցական կանոնադրութիւն, կուսորգանների ընտրականութիւն, կուսակցական ղեկավարների հաշվետուութիւն կուսակցական մասսայի առջև: Կարէք կա՞ արդշօք այդ բոլորի: Արժե՞ միթե ընդհանրապէս գլուխ ցաւացնել այդ բոլոր մանրունքների համար, յեթե մեզանում տնտեսութեանն աճում է, իսկ բանվորների և գյուղացիների նյութական դրութեանն ալելի ու ալելի յե բարելավվում: Այդ բոլորը դատարկ բաներ են: Պլանները գերակատարում ենք, մեզ մոտ կուսակցութեանը վատ չէ, կուսակցութեան կենսակոմը նույնպէս վատ չէ,—եւ ի՞նչ է պետք մեզ: Տարօրինակ մարդիկ են նստած այնտեղ՝ Մոսկվայում, կուսակցութեան կենսակոմում—ինչ-վոր հարցեր են հընարում, խոսում են ինչ-վոր վնասարարութեան մասին, իրենք չեն քնում, ուրիշներին էլ չեն թողնում քընելու...

Ահա ձեզ ակնառու որինակ, թե ինչպէս հեշտութեամբ և «պարզ կերպով» քաղաքական կուրութեամբ են վարակվում մեր մի քանի անփորձ ընկերները՝ տնտեսական հաջողութեաններով գլխապտույտ կերպով տարվելու հետեանքով:

Մրանք են հաջողութեանների հետ, նվաճումների հետ կապված վտանգները:

Մրանք են պատճառները, վոր մեր կուսակցական ընկերները, տարվելով տնտեսական հաջողութեաններով, մոռացել են միջազգային ու ներքին բնույթի փաստերի մասին, վորոնք երկրի նշանակութեան ունեն իտրհրդային Միութեան համար, և չեն նկատել

մի ամբողջ շարք վտանգներ, վորոնք չըջապատել են մեր յերկիրը:

Սրանք են մեր անհողության, մոռացկոտության բարենհողության, քաղաքական կուրության արմատները:

Սրանք են մեր տնտեսական ու կուսակցական աշխատանքի թերությունների արմատները:

## V

### ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ի՞նչպես վերացնել մեր աշխատանքի այս թերությունները:

Ի՞նչ է հարկավոր անել դրա համար:

Անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները:

1) Անհրաժեշտ է նախ և առաջ այս կամ այն գերատեսչության դժով «ընթացիկ հարցերի» մեջ խրված մեր կուսակցական ընկերների ուչադրությունը շրջել միջազգային և ներքին բնույթի քաղաքական մեծ հարցերի կողմը:

2) Անհրաժեշտ է մեր կուսակցության քաղաքական աշխատանքը հասցնել հարկ յեղած բարձրության, անկյունաքար դարձնելով կուսակցական, խորհրդային և տնտեսական կազրերի քաղաքական լուսավորության ու բուշեիկյան կոփման խնդիրը:

3) Անհրաժեշտ է պարզաբանել մեր կուսակցական ընկերներին, վոր տնտեսական հաջողությունները, վորոնց նշանակությունն անվիճելիորեն շատ մեծ

և և վորոնց մենք ճշտելու ու հասնելու յենք նաև  
առաջիկայում՝ որ-որի վրա, տարեցատարի,—այնու-  
ամենայնիվ չեն սպասուած մեր սոցիալիստական շինա-  
բարության ամբողջ գործը:

Պարզարանել, վոր սովերոտ կողմերը, վորոնք  
կապված են տնտեսական հաջողությունների հետ և  
արտահայտվում են ինքնագոհությամբ, անհողու-  
թյամբ, քաղաքական հաստության բթացմամբ,  
կարող են վերացվել միայն այն դեպքում, յեթե տըն-  
տեսական հաջողությունները ղուգակցվում են կու-  
սակցական շինարարության և մեր կուսակցության  
քաղաքական ծավալուն աշխատանքի հաջողություն-  
ների հետ:

Պարզարանել, վոր տնտեսական հաջողություններն  
իրենք, դրանց հաստատուն և տեսական լինելը, ամ-  
բողջությամբ ու լիովին կախված են կուսակցական-  
կազմակերպական և կուսակցական-քաղաքական աշ-  
խատանքի հաջողություններից, վոր առանց այդ պայ-  
մանի տնտեսական հաջողությունները կարող են ավա-  
զի վրա կառուցված դուրս գալ:

4) Անհրաժեշտ է հիշել և յերբեք չմոռանալ, վոր  
կապիտալիստական շրջապատումն այն հիմնական վտա-  
տըն է հանդիսանում, վորը վորոշում է Սորհրդային  
Միության միջազգային դրությունը:

Հիշել և յերբեք չմոռանալ, վոր քունի կա կապի-  
տալիստական շրջապատումը, կլինեն նաև վնասարար-  
ներ, դիվերսանանք, լրտեսներ, տեղորիսաներ, վո-  
րոնց Սորհրդային Միության թիկունքներն են սղար-  
կում ոտարեկրյա պետությունների հետախուզական  
որգանները, հիշել այդ մասին և դայքար մղել այն ըն-

կերներն դեմ, վորոնք թերազնահատում են կապիտա-  
լիստական շրջապատման փաստի նշանակությունը, վո-  
րոնք թերազնահատում են վնասարարության ուժերն  
ու նշանակությունը:

Պարզաբանել մեր կուսակցական ընկերներին, վոր  
վոչ մի անսակ տնտեսական հաջողություն, վորքան  
եւ այն մեծ լինի, չի կարող չեղյալ դարձնել կապիտա-  
լիստական շրջապատման փաստը և այդ փաստից բըղ-  
խող արգյունքները:

Չեռք աննել անհրաժեշտ միջոցներ նրա համար,  
վորպեսզի մեր ընկերները, կուսակցական ու վոչ կու-  
սակցական բոլշևիկները, հնարավորություն ունենան  
ծանոթանալու ոտարերկրյա հետախուզական որդան-  
ների վնասարար-դիվերսիոն և լրտեսային աշխատան-  
քի նպատակներին ու խնդիրներին, պրակտիկային ու  
անխնդիրային:

5) Անհրաժեշտ է պարզաբանել մեր կուսակցա-  
կան ընկերներին, վոր տրոյկիստաները, վորոնք ներկա-  
յացնում են ոտարերկրյա հետախուզական որդանների  
դիվերսիոն-վնասարար ու լրտեսային աշխատանքի  
ակտիվ տարրերը, վաղուց արդեն դադարել են բան-  
վոր գասակարգի ներսում քաղաքական հոսանք լինե-  
լուց, վոր նրանք վաղուց արդեն դադարել են ծառա-  
յերուց վորեւե գաղափարի, վորը համատեղելի չե բան-  
վոր գասակարգի շահերի հետ, վոր նրանք վեր են ած-  
վել վնասարարների, դիվերսանտների, լրտեսների,  
մարգասպանների անսկզբունք ու գաղափարադուրկ մի  
բանդայի, վորոնք ոտարերկրյա հետախուզական որ-  
դանների մոտ աշխատում են վարձով:

Պարզաբանել, վոր արդի տրոյկիզմի դեմ մզվող

պայքարում այժմ հարկավոր են վոչ թե հին մեթոդներ, վոչ թե գիտնականի մեթոդներ, այլ նոր, մեթոդներ, արմատախիլ անելու և ՉախՉախելու մեթոդներ:

6) Անհրաժեշտ և պարզաբանել մեր հուսակցական ընկերներին արդի վնասարարների և Շախտիի ժամանակաշրջանի վնասարարների միջև յեղած տարրերությունը, պարզաբանել, վոր յեթե Շախտիի ժամանակաշրջանի վնասարարները մեր մարդկանց խարում եյին տեխնիկայով, ոգտագործելով նրանց տեխնիկական հետամնացությունը, ապա արդի վնասարարները, վորոնք ունեն հուսակցական տոմս, մեր մարդկանց խարում են իրենց նկատմամբ՝ վորպես հուսակցության անդամների նկատմամբ՝ յեղած քաղաքական վստահությամբ, ոգտագործելով մեր մարդկանց քաղաքական անհոգությունը:

Անհրաժեշտ և տեխնիկային տիրապետելու հին լոգունգը, վորը համապատասխանում ևր Շախտիի ժամանակաշրջանին, լրացնել կադրերի քաղաքական դաստիարակության, բոլշևիզմին տիրապետելու և մեր քաղաքական դյուրահալատությունը լիկլիղացիայի յենթարկելու լոգունգով, մի լոգունգով, վորը լիովին համապատասխան լինի այժմյան մեր ասլրած ժամանակաշրջանին:

Կարող են հարցնել, թե չե՞ր կարելի արդյոք սրանից մի տասը տարի առաջ, Շախտիի ժամանակաշրջանում միանգամից տալ յերկու լոգունգներն ել— թե՛ առաջին լոգունգը՝ տեխնիկային տիրապետելու մասին, թե՛ յերկրորդ լոգունգը՝ կադրերի քաղաքական դաստիարակության մասին: Վո՛չ, չե՛ր կարելի: Մեղանում, բոլշևիկյան հուսակցության մեջ, գործերն

այդպէս չեն կատարուում: Հեղափոխական շարժման շրջադարձային մոմենտներում միշտ առաջ ե քաշվում մեկ վորևէ հիմնական լոզունգ, վորպէս հանգուցային, նրա համար, վորպէսզի նրանից կառչելով, նրա միջոցով ձիւ արվի ամբողջ շղթան: Լենինն այսպէս ե սովորեցրել մեզ. գտեք հիմնական ողակը մեր աշխատանքի շղթայի մեջ, կառչեցեք դրանից ե ձգեցեք այն նրա համար, վորպէսզի նրա միջոցով դուրս քաշենք ամբողջ շղթան ե ստաջ ընթանանք: Հեղափոխական շարժման պատմությաւնը ցույց ե տալիս, վոր այդ տակտիկան միակ ճիշտ տակտիկան ե: Շախտիի ժամանակաշրջանում մեր մարդկանց թուլությունն իրենց տեխնիկական հետամնացության մեջ եր: Վոչ թե քաղաքական, այլ տեխնիկական հարցերն ելին այն ժամանակ մեր թույլ տեղը կազմում: Ինչ վերաբերում ե այն ժամանակվա վնասաբարներին նկատմամբ մեր ունեցած քաղաքական վերաբերմունքին, ապա այն միանգամայն սարդ եր, վորպէս բուլչեիկներին վերաբերմունք քաղաքականապէս խորթ մարդկանց նկատմամբ: Մեր այդ տեխնիկական թուլությունը մենք վերացրինք նրանով, վոր տվինք տեխնիկային տիրապետելու լոզունգը ե անցած ժամանակաշրջանում դաստիարակեցինք տասնյակ ու հարյուր հազարավոր տեխնիկապէս կոփված բուլչեիկյան կադրեր: Այլ բան ե այժմ, յերբ մենք արդեն ունենք տեխնիկապէս կոփված բուլչեիկյան կադրեր, ե յերբ վնասաբարներին զերում հանգես են դալիս վոչ թե բացահայտորեն խորթ մարդիկ, վորոնք, սսենք նաև այն, վոչ մի տեխնիկական առավելություն չունեն մեր մարդկանց համեմատությամբ, այլ այնպիսի մարդիկ,

վորսնք կուսակցական տոմս ունենն և վայելում են կու-  
սակցութեան անդամի ընդ որ իրավունքները: Այժմ մեր  
մարդկանց թուլութեանը վոչ թե տեխնիկական հետա-  
մնացութեանն է, այլ քաղաքական անհոգութեանը,  
կույր վստահութեանը պատահականորեն կուսակցա-  
կան տոմս ստացած մարդկանց նկատմամբ, մարդկանց  
վոչ թե ըստ նրանց քաղաքական դեկլարացիաների,  
այլ ըստ նրանց աշխատանքի արդյունքների ստուգելու  
բացակայութեանը: Այժմ մեզ համար հանդուցալին  
հարց է հանդիսանում վոչ թե մեր կադրերի տեխնիկա-  
կան հետամնացութեան վերացումը, վորովհետև հիմ-  
նականում այդ արդեն վերացված է, այլ քաղաքական  
անհոգութեան և պատահականորեն կուսակցական տոմս  
ստացած վնասարարների նկատմամբ յեղած քաղաքա-  
կան դյուրահալատութեան վերացումը:

Այս է արժատական տարրերութեանը կադրերի  
համար մղվող պայքարի գործում՝ Շախտիի ժամանա-  
կաշրջանի հանդուցալին հարցի և ներկայիս ժամանա-  
կաշրջանի հանդուցալին հարցի միջև:

Ահա թե ինչու մենք սրանից տասը տարի առաջ  
չեյինք կարող տալ և չպետք է տայինք միանգամից  
յերկու լողունգ՝ թե՛ տեխնիկային տիրապետելու լո-  
ղունգը և թե՛ կադրերի քաղաքական դաստիարակու-  
թեան լողունգը:

Ահա թե ինչու տեխնիկային տիրապետելու հին  
լողունգն անհրաժեշտ է այժմ լրացնել նոր լողունգով՝  
բուլչելով ին տիրապետելու, կադրերի քաղաքական դաս-  
տիարակութեան և մեր քաղաքական անհոգութեանը  
վերացնելու լողունգով:

7) Անհրաժեշտ է ջանջտիւն և դեն զցել այն նե-

խած թեորիան, թե մեր յուրաքանչյուր առաջխաղա-  
ցումով դասակարգային պայքարը մեղանում պետք է,  
երբև թե, ավելի ու ավելի մարի, թե մեր հանգու-  
թյուններին զուգընթաց, դասակարգային թշնամին,  
երբև թե, ավելի ու ավելի ձեռնասուն է դառնում:

Դա վոչ միայն նեխած թորիա չէ, այլև վասնզավոր  
թեորիա չէ, վորովհետև այն քննեցում է մեր մարդ-  
կանց, թակարդի մեջ է գցում նրանց, իսկ դասակար-  
գային թշնամուն հնարավորություն է տալիս կաղզուր-  
վելու՝ խորհրդային իշխանության դեմ պայքար մղե-  
լու համար:

Ընդհակառակը, վորքան ավելի առաջ ընթանանք,  
վորքան ավելի մեծ հանցություններ ունենանք, այն-  
քան ավելի դադարելու չեն ջախջախված շահագործող  
դասակարգերի մնացորդները, այնքան ավելի շուտ  
պետք է դիմեն նրանք պայքարի ավելի սուր ձևերի,  
այնքան ավելի վատություն են անելու նրանք խոր-  
հրդային պետությանը, այնքան ավելի կտռչելու չեն  
պայքարի ամենակատաղի միջոցներին, վորպես դա-  
տապարտվածների վերջին միջոցներ:

Պետք է նկատի ունենալ, վոր ջախջախված դասա-  
կարգերի մնացորդները ԽՍՀՄ-ում միայնակ չեն: Նը-  
րանք ուղղակի սփանդակություն ունեն ԽՍՀՄ-ի սահ-  
մաններից դուրս գտնվող մեր թշնամիներից: Սխալ  
կլիներ կարծել, թե դասակարգային պայքարի վորորտը  
սահմանափակված է ԽՍՀՄ-ի սահմաններով: Յեթե  
դասակարգային պայքարի մի ծայրը գործում է  
ԽՍՀՄ-ի շրջանակներում, ապա նրա մյուս ծայրը ձգ-  
վում, հասնում է մեզ շրջադատող բուրժուական պե-  
տությունների սահմանները: Այդ չեն կարող չգիտենալ

Զախճախլած դասակարգերի մնացորդները: Յեւ ճենց  
այն պատճառով, վոր նրանք գիտեն այդ, նրանք այ-  
նուհետեւ եւ շարունակելու յեն իրենց կատարելի վտարն-  
ձգությունները:

Այդ ե սովորեցնում մեզ սլատամությունը: Այդ ե սո-  
վորեցնում մեզ լենիփիգմը:

Անհրաժեշտ ե այդ բութքը հիշել ե արժուն կենալ:

8) Անհրաժեշտ ե Զախճախել ե դեն դցել մյուս նե-  
խած թեորիան, վորն ասում ե, թե վնասարար իբր թե  
չի կարող լինել նա, սլ միշտ չի վնասում ե սլ թեկուզ  
յերբեմն հաջողություններ ե ցույց տալիս իր աշխա-  
տանքում:

Այդ տարորինակ թեորիան մերկացնում ե նրա հե-  
ղինակների միամտությունը: Վոչ մի վնասարար շա-  
րունակ չի վնասի, յեթե նա չի ուզում ամենակարճ  
ժամանակամիջոցում մերկացլած լինել: Ընդհակա-  
ռակը, իսկական վնասարարը պետք ե ժամանակ առ  
ժամանակ հաջողություններ ցույց տա իր աշխատան-  
քում, վորովհետեւ այդ միակ միջոցն ե իրեն վորպես  
վնասարար պահպանելու, վտտահություն շահելու ե  
իր վնասարարական աշխատանքը շարունակելու:

Յեւ կարծում եմ, վոր այս հարցը պարզ ե ե հե-  
տադա բացատրությունների կարիք չունի:

9) Անհրաժեշտ ե Զախճախել ե դեն դցել յերրորդ  
նեխած թեորիան, վորն ասում ե, թե անտեսական  
սլանների սխտեմատիկ կատարումն իբր թե ի չիք ե  
դարձնում վնասարարությունը ե վնասարարության  
հետեանքները:

Նմանորինակ թեորիան կարող ե հետապնդել միայն  
մի նպատակ՝ չոյել մեր աշխատողները գերատեսչական

ինքնատիրությունը, հանդատացնել նրանց և թուլացնել նրանց պայքարը միասարարության դեմ :

Ի՞նչ է նշանակում «մեր անտեսական պլանները սխտեմատիկ կատարումը» :

Առաջին՝ աղացուցված է, վոր մեր բոլոր անտեսական պլանները ցածրացված են, վորովհետև նրանք հաշվի չեն առնում այն հսկայական սեղերվներն ու հնարավորությունները, վոր թաղնված են մեր ժողովրդական անտեսության ընդերքում :

Յերրորդ՝ անտեսական պլանների միազուգույն կատարումն ըստ ժողկոմատների ամբողջությամբ վերցրած՝ դեռ չի նշանակում, վոր մի քանի շատ կարևոր ճյուղերում պլանները նույնպես կատարվում են : Ընդհակառակը, փաստերն ասում են, վոր տարեկան անտեսական պլանները կատարած և նույնիսկ գերակատարած մի ամբողջ շարք ժողկոմատներ սխտեմատիկորեն չեն կատարում պլանները ժողովրդական անտեսության մի քանի շատ կարևոր ճյուղերում :

Յերրորդ՝ կատկած չի կարող լինել, վոր յեթե միասարարները մերկացված և դուրս գցված չլինեյին, շատ ավելի վատ վիճակի մեջ կլինեյին անտեսական պլանների կատարման գործը, վորի մասին հարկ է, վոր հիշեյին քննարկվող թեորիայի կարճատես հեղինակները :

Չորրորդ՝ միասարարներն իրենց գլխավոր միասարարական աշխատանքը սովորաբար հարմարեցնում են վոչ թե խաղաղ ժամանակվա շրջանին, այլ պատերազմի նախորդակի կամ հենց պատերազմի ժամանակաշրջանին : Յենթադրենք, վոր մենք սկսեյինք որորել մեզ «անտեսական պլանները սխտեմատիկ կատարման»

նեխած թեորիայով և ձևուք չասայլնք վնասարարներին: Պատկերացնում են արդյոք այդ նեխած թեորիայի հեղինակները, թե ինչպիսի վիթխարի վնաս կհասցնեյին վնասարարները մեր սեռաությանը պատերազմի դեպքում, յեթե նրանց թողնեյին մնալ մեր ժողովրդական տնտեսության ընդերքում՝ «անանասական պլանների սխտեմատիկ կատարման» նեխած թեորիայի հովանու տակ:

Մի՞թե պարզ չէ, վոր «անանասական պլանների սխտեմատիկ կատարման» թեորիան վնասարարների համար ձեռնառ թեորիա չէ:

10) Անհրաժեշտ է ջախջախել և դեն դնել չորրորդ նեխած թեորիան, վորն ասում է, թե ստախանովյան շարժումը վնասարարությունը վերացնելու էրբ թե հիմնական միջոցն է հանդիսանում:

Այդ թեորիան հնարվել է նրա համար, վոր ստախանովականների և ստախանովյան շարժման վերաբերյալ չազակրատության ազմուկի տակ հարվածը հեռացվի վնասարարներից:

Ընկեր Մոլոտովին իր զեկուցման մեջ ցուցադրեց ամբողջ մի շարք փաստեր, վորոնք խոսում են այն մասին, թե ինչպես տրոցկիստական և վոչ-տրոցկիստական վնասարարները կուզրատում ու Գոնրատում, էջարը դործ դնելով քաղաքականապես անհող մեր ընկերների վտահուլթյունը, սխտեմատիկորեն խարում եյին ստախանովականներին, քար եյին դցում նրանց անիվի տակ, արհեստականորեն մի ամբողջ շարք խոչընդոտներ եյին ստեղծում նրանց հաջող աշխատանքի դեմ և, վերջապես, հասան այն բանին, վոր քայքայեցին նրանց աշխատանքը: Ի՞նչ կարող են անել միմի-

այն ստախանովախանները, յէթե կապիտալ շինարարութեան վնասարարական կատարումը, ասենք՝ Գոնրատում, խզում առաջացրեց տեմպերից հետ մնացող ածխի հանույթի նախասպարաւանական աշխատանքներէ և մյուս բոլոր աշխատանքներէ միջև: Մի՞թե պարզ չէ, վոր ստախանովեան շարժումն ինքը կտրիք ունի մեր սեւալ ոչնույթեանը՝ ընդդեմ վնասարարներէ բոլոր ու ամեն տեսակ մեքենայութեաններէ, վորպեսզի առաջ մղի գործը և կատարի իր մեծ միտախան: Մի՞թե պարզ չէ, վոր պայքարը վնասարարութեան դեմ, պայքարը վնասարարութեան լիկվիդացիայի համար, վնասարարութեան սանձումնայն պայմանն և, վորն անհրաժեշտ և նրա համար, վորպեսզի ստախանովեան շարժումը կարողանա ծավալվել ամբողջ լայնութեամբ:

Յետ կարծում եմ, վոր այդ հարցը նույնպէս պարզ է և հետագա բացատրութեաններէ կարիք չունի:

11) Անհրաժեշտ և ջախջախել և դեն գցել հինգերորդ նեխած թեորիան, վորն ասում է, թե արոցկիստական վնասարարներն իրր թե այլևս սեղերով չունեն, թե նրանք իրր թե իրենց վերջին կազմերն են հավարում:

Այդ ճիշտ չէ, բնկերնէր: Այդպիսի թեորիա կարող էյին հնարել միմիայն միամիտ մարդիկ: Տրոցկիստական վնասարարներն ունեն իրենց սեղերվները: Նրանք բազկացած են նախ և առաջ ԽՍՀՄ-ի ջախջախված շահագործող դասակարգերի մնացորդներէց: Նրանք բազկացած են ԽՍՀՄ-ի սահմաններէց դուրս գտնվող ամբողջ մի շարք խմբերից ու կազմակերպութեաններէց, վորոնք թշնամի յեն Խորհրդային Միութեանը:

Վերցնենք, որինակ, տրոցկիստական հակահեղափոխական IV ինտերնացիոնալը, վորը յերկու յերրորդով բազկացած է լրտեսներից ու դիվերսանտներից: Ինչո՞վ ռեզերվ չէ այդ: Մի՞թե պարզ չէ, վոր այդ լըրտեսական ինտերնացիոնալը կազերեր է տալու տրոցկիստների լրտեսային-վնասարարական աշխատանքի համար:

Կամ վերցնենք, որինակ, սրիկա Շեֆլոյի խումբը Նորվեգիայում, վոր իր մոտ ապաստան էր տվել որերլրտես Տրոցկուն և նրան ոգնում էր վատություն անելու Նորհրդային Միությանը: Այդ խումբն ինչո՞վ ռեզերվ չէ: Ո՞վ կարող է ժխտել, վոր այդ հակահեղափոխական խումբն այսուհետև ել ծառայություններ է մատուցելու տրոցկիստական լրտեսներին ու վնասարարներին:

Կամ վերցնենք, որինակ, Շեֆլոյի նման նույնպիսի մի սրիկայի խումբ, Սուվարինի խումբը Ֆրանսիայում: Ինչո՞վ ռեզերվ չէ այն: Մի՞թե կարելի չէ ժխտել, վոր սրիկաների այդ խումբը նույնպես ոգնելու չէ տրոցկիստներին՝ Նորհրդային Միության դեմ ուղղված նրանց լրտեսային-վնասարար աշխատանքում:

Իսկ Գերմանիայում գտնվող այդ բոլոր պարոնները, ամեն տեսակ Ռուտ Ֆիշերները, Մասլովները, Ուրբանները, վորոնք իրենց հոգին ու մարմինը վաճառել են Ֆաշիստներին, — ինչո՞վ ռեզերվ չեն նրանք տրոցկիստական լրտեսային-վնասարար աշխատանքի համար:

Կամ, որինակ, գրողների հայտնի Հորդան Ամերիկայում՝ հայտնի Ժուլիե Իստմենի գլխավորութամբ, գրչի այդ բոլոր ավազակները, վորոնք ապ-

րում են հենց նրանով, վոր զրպարտում են ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգին,—նրանք ինչո՞վ ուզեցի՞ չեն տրոցկիզմի համար:

Վո՛չ, պետք է դեն գցել այն նեխած թեորիան, թե տրոցկիսաներն իբր թե իրենց վերջին կադրերն են հալաքում:

12) Վերջապես, անհրաժեշտ է ջախջախել և դեն գցել մի նեխած թեորիա ևս, վորն ասում է, թե քանի վոր մենք, բուլչեիկներս, շատ ենք, իսկ վնասարարները քիչ են, քանի վոր մեզ, բուլչեիկներիս, պաշտպանում են տասնյակ միլիոնավոր մարդիկ, իսկ տրոցկիստ վնասարարներին՝ միմիայն միավորներ ու տասնյակներ, ապա մենք, բուլչեիկներս, կարող եյինք ուշադրություն ել չդարձնել ինչ-վոր մի բուռ վնասարարների վրա:

Այդ ճիշտ չէ, ընկերներ: Այդ ամբելի քան տարորինակ թեորիան հնարված է միտիթարելու համար մեր մի քանի դեկավար ընկերներին, վորոնք տապալվել են աշխատանքում վնասարարության դեմ պայքարել չբարոզանալու պատճառով, և հնարված է քնեցնելու համար նրանց զգաստությունը, թողնելու, վոր նրանք հանդիսա քնեն:

Վոր տրոցկիստական վնասարարներին աջակցում են միավորներ, իսկ բուլչեիկներին՝ տասնյակ միլիոնավոր մարդիկ—այդ, իհարկե, ճիշտ է: Բայց դրանից բնավ չի հեռուում, թե վնասարարները չեն կարող լրջադույն վնաս հասցնել մեր գործին: Վատություն անելու և վնասելու համար ամենևին մեծ թվով մարդ չի պահանջվում: Գնեպրոտորոյը կառուցելու համար հարկավոր է դործի դնել տասնյակ հազարավոր բան-

վորներ: Իսկ այն սրայթեցնելու համար պահանջվում  
է դուրս մի քանի տասնյակ մարդ, վոչ ավելի: Վոր-  
պեսզի սրատերազմի ժամանակ ճակատամարտը շահվի,  
դրա համար կարող է պահանջվել կարմիր-բանակային-  
ների մի քանի կորպուս: Իսկ վորպեսզի այդ շահումը  
ճակատում ձախողվի, դրա համար բավական է, վոր  
վորեն տեղում՝ բանակի շտաբում կամ նույնիսկ դի-  
վիզիայի շտաբում լինեն մի քանի լրտես, վորոնք կա-  
րող են դողանալ սպերատիվ սլանը և հանձնել հակա-  
ռակորդին: Վորպեսզի յերկաթուղային մեծ կամուրջ  
կառուցվի, դրա համար հազարավոր մարդիկ են պա-  
հանջվում: Իսկ վորպեսզի այն սրայթեցվի, դրա հա-  
մար բավական է քնդամենը մի քանի հողի: Կարելի  
**յէր տասնյակ ու հարյուրավոր այլայլսի սրկնակներ**  
րերել:

Հետևաբար, չի կարելի իրեն միխթարել նրանով,  
թէ մենք շատ ենք, իսկ նրանք, արոցկիստական վնա-  
սարտրները, քիչ են:

Պէտք է հասնել այն բանին, վորպեսզի նրանք,  
արոցկիստական վնասարտրները, բոլորովին չլինեն մեր  
չարքերում:

Այդպես է դործն այն հարցում, թէ ինչպես պէտք  
է լիկվիրացիայի յենթարկել մեր աշխատանքի այն  
թերությունները, վորոնք քնդհանուր են մեր բոլոր՝  
թե՛ անտեսական ու խորհրդային և թե՛ վարչական ու  
կուսակցական կադմակերպությունների համար:

Մրանք են այն միջոցառումները, վորոնք անհրա-  
ժեշտ են այդ թերությունները վերացնելու համար:

Ինչ վերաբերում է հատկապէս կուսակցական կադ-  
մակերպություններին և նրանց աշխատանքի թերու-

Թյուններին, ապա աչդ թերությունների վերացման միջոցների մասին բավականաչափ մանրամասնորեն խոսվում է բանաձևի՝ ձեր հասկացողությանը ներկայացվող նախադժուհ: Ուստի յես կարծում եմ, վոր այստեղ կարիք չկա ծանրանալու դործի աչդ կողմի վրա:

Յես կուզեյի միայն մի քանի խոսք ասել մեր կուսակցական կազմերի քաղաքական պատրաստության ու կատարելագործման հարցի մասին:

Յես կարծում եմ, վոր յեթե մենք կարողանայինք, յեթե մենք ի վիճակի լինեյինք մեր կուսակցական կազմերը վարից—վեր նախապատրաստելու իդեոլոգիայեն և կոփելու քաղաքականորեն այնպես, վոր նրանք կարողանային ազատորեն կողմնորոշվել ներքին ու միջազգային իրադրության մեջ, յեթե մենք կարողանայինք դարձնել նրանց միանգամայն **կասկած չկողմնակիցներ**, մարքսիստներ՝ ընդունակ առանց լուրջ սխալների լուծելու յերկերը՝ ղեկավարելու հարցերը, ապա դրանով մենք լուծած կլինեյինք մեր բոլոր խնդիրների լինը տասերորդը:

Ի՞նչ վիճակի մեջ է մեր կուսակցության ղեկավար կազմի հարցը:

Մեր կուսակցության կազմում, յեթե նկատի առնենք նրա ղեկավար խավերը, կան մոտ յերեք—չորս հազար բարձր ղեկավարներ: Դա—յես կասեյի—մեր կուսակցության ղեներալիտանն է:

Ապա դուրիս են 30—40 հազար միջակ ղեկավարներ: Դա մեր կուսակցական սղայությունն է:

Այնուհետև գալիս է մոտ 100—150 հազար կուսակցական ստորին հրամանատարական կազմ: Դա մեր, այսպես տասը, կուսակցական յենթասղայությունն է:

Բարձրացնել այդ հրամանատարական կազմերի իրենց իրական մակարդակը և քաղաքական կոմիտե-  
ժութիւնը, լցնել այդ կազմերի մեջ թաքմ ուժեր, վո-  
րոնք սպասում են իրենց առաջադամանը, և այդպիսով  
ընդարձակել ղեկավար կազմերի կազմը,—ասա խըն-  
դիրը:

Ի՞նչ է սահանջվում դրա համար:

Նախ և առաջ անհրաժեշտ է ստաջարկել մեր կու-  
սակցական ղեկավարներին—բջիջների քարտուղարնե-  
րից մինչև մարզային ու հանրապետական կուսակցա-  
կան կազմակերպութիւնների քարտուղարները—իրենց  
համար ընտրել վորոչ ժամանակամիջոցում յերկուս-  
կան մարդ, յերկուսկան այնպիսի կուսակցական աչ-  
խատող, վորոնք ընդունակ են նրանց իսկական տեղա-  
կալները լինելու: Կարող են ասել. իսկ վո՞րտեղից  
զտնենք դրանց, յուրաքանչյուրի համար յերկու տե-  
ղակալ, մենք չունենք այդպիսի մարդիկ, չունենք հա-  
մապատասխան աշխատողներ: Այդ ճիշտ է՝, ընկեր-  
ներ: Ընդունակ մարդիկ, տաղանդավոր մարդիկ մենք  
ունենք տասնյակ հազարներով: Հարկավոր է միայն  
ճանաչել նրանց և ժամանակին ստաջ քաշել, վորպես-  
ղի նրանք չլճանան հին տեղում և չսկսեն նեխել: Վո-  
րոնեցեք և կգտնեք:

Այնուհետև: Բջիջների քարտուղարների կուսակ-  
ցական ուսուցման ու վերապատրաստման համար ան-  
հրաժեշտ է յուրաքանչյուր մարզային կենտրոնում  
ստեղծել քառամսյա «կուսակցական դասընթացներ»:  
Այդ դասընթացները պետք է ուղարկել բոլոր սկզբնա-  
կան կուսակցական կազմակերպութիւնների (բջիջնե-  
րի) քարտուղարներին, իսկ այնուհետև, յերբ նրանք

կանցնեն դասընթացը և կվերադառնան տեղերը, ուղարկել նրանց տեղակալներին և սկզբնական կուսկազմակերպությունները մեծաբանորէն անդամներին:

Այնուհետև: Շրջանային կազմակերպությունների առաջին քարտուղարների քաղաքական վերապատրաստման համար անհրաժեշտ է ԽՍՀՄ-ում, սակայն տասնամեկից ավելի կարևոր կետերում, ստեղծել ութամսյա «Լեհիսյան դասընթացներ»: Այդ դասընթացները պետք է ուղարկել շրջանային և սկզբնական կուսակցական կազմակերպությունների առաջին քարտուղարներին, իսկ այնուհետև, յերբ նրանք կանցնեն դասընթացը և կվերադառնան տեղերը,—ուղարկել նրանց տեղակալներին և շրջանային ու սկզբնական կազմակերպությունների մեծաբանորէն անդամներին:

Այնուհետև: Քաղաքային կազմակերպությունները քարտուղարների իրենց իրական վերապատրաստման ու քաղաքական կատարելագործման համար անհրաժեշտ է ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից կազմակերպել վեցամսյա «Կուսակցութեան պատմութեան ու քաղաքականութեան դասընթացներ»: Այդ դասընթացները պետք է ուղարկել քաղաքային կազմակերպությունների առաջին կամ յերկրորդ քարտուղարներին, իսկ այնուհետև, յերբ նրանք կանցնեն դասընթացները և կվերադառնան տեղերը, ուղարկել քաղաքային կազմակերպությունների մեծաբանորէն անդամներին:

Վերջապէս, անհրաժեշտ է ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից ստեղծել վեցամսյա «Խորհրդակցութեան և ներքին ու միջազգային քաղաքականութեան հարցերի վերաբերյալ»: Այստեղ պետք է ուղարկել մարզային ու յերկ-

րային կազմակերպութեաններէ և ազգային կոմունիստական կուսակցութեաններէ կենտրոնական կոմիտեաների առաջին քարտուղարներին: Այդ ընկերները պետք է տան վոչ թե մեկ, այլ մի քանի հերթափոխ, վորոնք կարողանան փոխարինել մեր կուսակցութեան կենտրոնական կոմիտեայի ղեկավարներին: Այդ անհրաժեշտ է, և այդ պետք է կատարվի:

Յես վերջացնում եմ, ընկերներ:

Մենք այսպիսով շարադրեցինք մեր աշխատանքի հիմնական թերութեանները, ինչպես այն թերութեանները, վորոնք ընդհանուր են մեր բոլոր կազմակերպութեաններէ համար,—անտեսական, վարչական, կուսակցական,—այնպես ել այն թերութեանները, վորոնք հատուկ են հատկապես միայն կուսակցական կազմակերպութեաններին,—թերութեաններ, վորոնք բանվոր գասակարգի թշնամիներն սգսագործում են իրենց դիվերսիոն-վնասարարական և լրտեսային-տեղորիստական աշխատանքի համար:

Մենք, այնուհետև, նշեցինք այն հիմնական միջոցառումները, վորոնք անհրաժեշտ են նրա համար, վորպետքի վերացնենք այդ թերութեանները և անվնաս դարձնենք ստարերկրյա հետախուզական օրգանների արոցկիստական-ֆաշիստական դործակալների դիվերսիոն-վնասարարական և լրտեսային-տեղորիստական վտանգութեանները:

Հարց է ծագում, թե մենք կարո՞ղ ենք արդյոք էրադործել այս բոլոր միջոցառումները, ունե՞նք մենք արդյոք դրա համար բոլոր անհրաժեշտ հնարավորութեանները:

Անկասկած, կարող ենք: Կարող ենք, վորովհետև

մենք մեր արամադրութեան սակ ունենք այն բոլոր միջոցները, վարանք անհրաժեշտ են այդ միջոցառումներն իրագործելու համար:

Իսկ ի՞նչ է պահատում մեզ:

Պահատում է մշտյն մեկ բան. պատրաստակամություն ինկվիլդացիայի յենթարկելու մեր սեփական անհոգությունը, մեր սեփական բարեհոգությունը, մեր սեփական քաղաքական կարճատևությունը:

Այս է խնդրի առանցքը:

Բայց մի՞թե մենք չենք կարողանա ազատվել այդ ծիծաղելի ու իրկոտային հիվանդությունից, մենք, վոր տապալել ենք կապիտալիզմը, հիմնականում կառուցել ենք սոցիալիզմ և բարձրացրել ենք համաշխարհային կոմունիզմի մեծ դրոշը:

Մենք հիմք չունենք կասկածելու, վոր անտարակույս կազատվենք դբանից, յեթե, իհարկե, ցանկանանք այդ: Կազատվենք վոչ թե հենց այնպես, այլ բոլշևիկոսին, ինչպես հարկն է:

Յեւ յերբ մենք կազատվենք այդ իրկոտային հիվանդությունից, մենք կարող ենք լիակատար վստահությամբ ասել, վոր մեզ համար սարսափելի չէ վոչ մի թշնամի, վո՛չ ներքին, վո՛չ արտաքին, մեզ համար սարսափելի չեն նրանց վտանգությունները, վորովհետև մենք ապագայում նրանց կջախջախենք նույնպես, ինչպես ջախջախում ենք նրանց այժմ, ինչպես նրանց ջախջախել ենք անցյալում: (Ծափահարություններ):

## ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍԲ

Ընկերներ:

Յես իմ զեկուցման մեջ խոսեցի քննարկելու զօրծի հիմնական հարցերի մասին: Մտքերի փոխանակութեանը ցույց տվեց, վոր մեզ մոտ այժմ կա լիակատար պարզութեան, կա խնդիրների ըմբռնում և կա մեր աշխատանքի թերութեանները վերացնելու պատրաստակամութեան: Բայց մտքերի փոխանակութեանը ցույց տվեց նաև, վոր կան մեր կազմակերպական-քաղաքական պրակտիկայի վորոշ կոնկրետ հարցեր, վորոնց վերաբերյալ մեզ մոտ դեռ կատարելապես պարզ հասկացութեան չկա: Յես հաշվեցի այդպիսի 7 հարց:

Թույլ տվեք մի քանի խոսք ասել այլ հարցերի մասին:

1) Այժմ, պետք և յենթադրել, բոլորը հասկացան, գիտակցեցին, վոր անտեսական կամպանիաներով ու անտեսական հաջողութեաններով չափից դուրս տարվելը՝ կուսակցական-քաղաքական հարցերը թերագնահատելու և մոռացութեան տալու պայմաններում—դեպի փակուղի յե տանում: Հետևաբար, անհրաժեշտ և աշխատողների ուշադրութեանը չըջել կուսակցական-քաղաքական հարցերի կողմը, այնպես, վոր անտեսական հաջողութեանները զուգակցվեն և կողք-կողքի ընթա-

նան կուսակցական—քաղաքական աշխատանքի հաջողութ-  
թյուններին հետ:

Գործնականորեն ի՞նչպես իրականացնել կուսակցա-  
կան—քաղաքական աշխատանքն ուժեղացնելու խնդիրը,  
կուսակցական կազմակերպությունները անտեսական  
մանրունքներից ազատելու խնդիրը: Ինչպես յերևում է  
մտքերի փոխանակությունից, վորոշ ընկերներ հակու-  
մբն ունեն այն սխալ հեռուությունն անելու դրանից,  
վոր այժմ իրր թե անհրաժեշտ կլինի բոլորովին հեռա-  
նալ անտեսական աշխատանքից: Համենայն դեպս ձայ-  
ներ յեղան—դե, այժմ, վառք ասածու, կազատվենք  
անտեսական գործերից, այժմ կարելի յե կուսակցա-  
կան—քաղաքական աշխատանքով ել զբաղվել: Ծի՞շա  
ե արդյոք այդ հեռուությունը: Վո՞չ, ճիշտ չէ:  
Յերբ մեր կուսակցական ընկերները տարվելով  
անտեսական հաջողություններով, հեռանում եյին  
քաղաքականությունից, այդ ծայրահեղություն եր,  
վոր մեծ զոհեր պատճառեց մեզ: Յեթե այժմ  
մեր վորոշ ընկերներ ձեռնամուխ լինելով կու-  
սակցական—քաղաքական աշխատանքի ուժեղացմանը,  
մտքով անցկացնեն հեռանալ անտեսությունից,  
ասպա այդ կլինի մյուս ծայրահեղությունը, վորք  
մեզանից կլինի վոչ պակաս զոհեր: Չի կարելի մեկ  
ծայրահեղությունից նետվել դեպի մյուսը: Չի կարելի  
քաղաքականությունն անջատել անտեսությունից:  
Մենք չենք կարող հեռանալ անտեսությունից նույն-  
պես, ինչպես չենք կարող հեռանալ քաղաքականու-  
թյունից: Ուսումնասիրության հարմարության համար  
մարդիկ սովորաբար մեթոդոլոգիորեն անջատում են  
անտեսության հարցերը քաղաքականության հարցե-  
րից: Բայց այդ կատարվում է միայն մեթոդոլոգիա-

րեն, արհեստականորեն, միայն ուսումնասիրութեան հարմարութեան համար: Կյանքում, ընդհակառակը, պրակտիկայում քաղաքականութիւնն ու տնտեսութիւնն անբաժանելի յեն: Նրանք գոյութիւն ունեն միատեղ և գործում են միատեղ: Յեւ նա, ով մտածում է մեր պրակտիկ քաղաքականութեան մեջ տնտեսութիւնն անջատել քաղաքականութիւնից, տնտեսական աշխատանքն ուժեղացնել քաղաքական աշխատանքը նվազեցնելու գնով, կամ ընդհակառակը, քաղաքական աշխատանքն ուժեղացնել տնտեսական աշխատանքի նըվազեցման գնով,—նա անսպասան ընկնում է փակուզու մեջ:

Բանաձևի նախագծի՝ կուսակցական կազմակերպութիւնները տնտեսական մանրունքներից ազատելու և կուսակցական-քաղաքական աշխատանքն ուժեղացնելու վերաբերյալ հայտնի կետի իմաստն այն չէ, վոր հեռանանք տնտեսական աշխատանքից ու տնտեսական ղեկավարութիւնից, այլ սոսկ միայն այն, վոր այլևս թույլ չտանք տնտեսական որդանները, այդ թվում և հատկապես հողային որդանները մեր կուսակցական կազմակերպութիւններով փոխարինելու և դիմազրկելու պրակտիկան: Հեռաբար, անհրաժեշտ է յուրացնել տնտեսական որդանների բոլշևիկյան ղեկավարման մեթոդը, վորի ելութիւնն այն է, վոր սխառեմատիկաբար ոգնենք այդ որդաններին, սխառեմատիկաբար ամբացնենք նրանց և տնտեսութիւնը ղեկավարենք վոչ թէ այդ որդաններից անկախ, այլ նրանց միջոցով: Հարկավոր է տնտեսական որդաններին ու նախ և առաջ հողային որդաններին լավագույն մարդիկ տալ, հարկավոր է այդ որդանները կամպլեկտավորել նոր, լա-

վազույն աշխատողներով, վորոնք ընդունակ լինեն կատարել իրենց վրա դրված խնդիրները: Միայն այն բանից հետո, յերբ կկատարվի այդ աշխատանքը, կարելի յե հույս ունենալ, վոր կուսակցական կազմակերպությունները լիովին կազատագրվեն անտեսական մանրունքներից: Հասկանալի յե, վոր այդ գործը լուրջ եւ վորոչ ժամանակ ե պահանջում: Բայց քանի դեռ այդ չի կատարված, կուսակցական կազմակերպությունները հարկադրված կլինեն ատաղիկացում եւ վորոչ կարճ ժամանակամիջոցում ընդհուպ զրոգվել դառնանեսական գործերով՝ դրանց բոլոր մանրունքներով—վար, ցանք, բերքահավաք ե այլն:

2) Յերկու խոսք վնասարարների, դիվերսանտների, լրտեսների ե այլոց մասին: Հիմա, յես կարծում եմ, բոլորի համար պարզ ե, վոր այժմյան վնասարարներն ու դիվերսանտները, ինչպիսի դրոշակով ել թեկուզ դիմակալորվեն նրանք, տրոցկիստական թե բուխարինյան, վազուց արդեն դադարել են բանխորական շարժման մեջ քաղաքական հոսանք լինելուց, վոր նրանք վեր են ածվել պրոֆեսիոնալ վնասարարների, դիվերսանտների, լրտեսների, մարդասպանների անօկոբունք ու դադափարապուրկի մի բանդայի: Հասկանալի յե, վոր անհրաժեշտ կլինի անողորմարար ջախջախել ու արժատախիլ անել այդ պարոններին վորպես բանխոր դատակարգի թշնամիների, վորպես մեր հայրենիքի դաժամադներ: Այդ պարզ ե ե հետագա պարզաբանումներ չի պահանջում:

Բայց ահա մի հարց. գործնականորեն ի՞նչպե՞ս իրականացնել տրոցկիդմի ճապոն-գերբյանական գործակալներին ջախջախելու ե արժատախիլ անելու խնդիր-

ըր: Այդ նշանակում է արդյոք, ՚իոր պետք է ջանջախել ու արմատախիլ անել վոչ միայն իսկական տրոցկիստներին, այլև նրանց, ովքեր մի ժամանակ տատանվել են տրոցկիզմի կողմը, իսկ այնուհետև վաղուց արդեն հեռացել են տրոցկիզմից, վոչ միայն նրանց, ովքեր իսկապես վնասարարության տրոցկիստական գործակալներ են հանդիսանում, այլև նրանց, ովքեր մի ժամանակ առիթ են ունեցել անցնելու այն փողոցով, վորով մի ժամանակ անցել է այս կամ այն տրոցկիստը: Համենայն դեպս այդպիսի ճայներ այստեղ: պլենումում լավեցին: Կարելի՞ յե արդյոք բանաձևի նման մեկնարանումը ճիշտ համարել: Վո՛չ, չի՛ կարելի ճիշտ համարել: Այդ հարցում, ինչպես և մյուս բոլոր հարցերում, անհրաժեշտ է անհատական, չերտավորված մտեցում: Չի՛ կարելի բոլորին մի սանրաչափով խուզել: Այդպիսի հախուռն մտեցումը կարող է միայն վնասել իսկական տրոցկիստական վնասարարներին ու լրտեսներին դեմ պայքարելու գործին:

Մեր պատասխանատու ընկերներին մեջ կան վորոշ թվով նախկին տրոցկիստներ, վորոնք վաղուց արդեն հեռացել են տրոցկիզմից և տրոցկիզմի դեմ պայքար են մղում վո՛չ թե ավելի վատ, այլ ավելի լավ, քան մեր հարգելի ընկերներից վոմանք, վորոնք առիթ չեն ունեցել տրոցկիզմի կողմը տատանվելու: Հիմարություն կլինեն այժմ արատավորել այդպիսի ընկերներին:

Մեր ընկերներին մեջ կան նաև այնպիսիները, վորոնք դադարապես միշտ կանդիսած են յեղել տրոցկիզմի դեմ, բայց չնայած դրան, անձնական կապ են պահպանել առանցձին տրոցկիստներին հետ, վորը նրանք չեն հապաղել վերացնել, հենց վոր նրանց համար պարզ

ե դարձել տրոցկիզմի գործնական Ֆիզիոնոմիան: Լամբ  
զե, իհարկե, վոր նրանք առանձին տրոցկիսաների հետ  
ունեցած իրենց անձնական բարեկամական կապը կտրե-  
ցին վոչ թե միանգամից, այլ ուշացումով: Բայց հի-  
մարություն կլինեի այդպիսի ընկերներին տրոցկիսա-  
ների հետ միասին մեկ կույտի մեջ նետել:

3) Ի՞նչ է նշանակում ճիշտ ընտրել աշխատողնե-  
րին և նրանց ճիշտ դասավորել աշխատանքի մեջ:

Այդ նշանակում է աշխատողներին ընտրել նախ՝  
քաղաքական հատկանիշով, այսինքն՝ նրանք արժանի՞  
յեն արդյոք քաղաքական վստահության, և յերկրորդ՝  
գործնական հատկանիշով, այսինքն՝ նրանք պիտանի՞  
յեն արդյոք այս-ինչ կոնկրետ աշխատանքի համար:

Այդ նշանակում է՝ գործարարական մոտեցումը  
չվերածել գործամուրական մոտեցման, յերբ մարդիկ  
հետաքրքրվում են աշխատողների գործարար հատկու-  
թյուններով, բայց չեն հետաքրքրվում նրանց քաղա-  
քական Ֆիզիոնոմիայով:

Այդ նշանակում է՝ քաղաքական մոտեցումը չվե-  
րածել միակ ու սպառիչ մոտեցման, յերբ մարդիկ հե-  
տաքրքրվում են աշխատողների քաղաքական Ֆիզիոնո-  
միայով, բայց չեն հետաքրքրվում նրանց գործարարա-  
կան հատկություններով:

Կարելի՞ յե արդյոք ասել, վոր բուլչեիկյան այս  
կանոնը կատարվում է մեր կուսակցական ընկերների  
կողմից: Դժբախտարար, այդ չի կարելի ասել: Այս-  
տեղ, պլենումում արդեն խոսեցին այդ մասին: Բայց  
ամեն ինչ չսացին: Բանն այն է, վոր այդ փորձված  
կանոնը մեր պրակտիկայում ամեն քայլափոխում  
խախտվում է և այն ել ամենակուպիտ ձևով: Ամենից

ալելիի հաճախ աշխատողներին ընտրում են վոչ թե քսա որչեկտիվ հատկանիշների, այլ ըստ սրատահական, սուբյեկտիվ, մեղչանական-քաղքենիական հատկանիշների: Ամենից ալելիի հաճախ ընտրում են այսպես կոչ-ված ծանոթներին, բարեկամներին, հայրենակիցներին, անճնապես նվիրված մարդկանց, իրենց՝ շեֆերին գո-վարանելու մեջ վարպետներին—անկախ նրանց քաղա-քական ու գործարարական պիտանիությունից:

Հատկանալի չե, վոր սրատասխանատու աշխատող-ները դեկավար խմբի փոխարեն ստացվում և մտերիմ մարդկանց մի փոքրիկ ընտանիք, մի արաւել, վորի ան-դամներն աշխատում են ապրել խաղաղ, չվիրավորել միմյանց, աղբը դուրս չհանել բակից, գովարանել մի-մյանց և ժամանակ առ ժամանակ փուչ ու դատարկ և սիրտ խտնող ուսպորաներ ուղարկել կենտրոն հաջո-ղությունների մասին:

Դժվար չե հատկանալ, վոր այդպիսի ընտանեկան իրադրության մեջ չի կարող տեղ լինել վո՛չ աշխա-տանքի թերությունների քննադատության համար, վո՛չ աշխատանքի դեկավարների ինքնաքննադատու-թյան համար:

Հատկանալի չե, վոր այդպիսի ընտանեկան իրա-դրությունը բարենտրաստ միջավայր և ստեղծում սոս-րաքարչներ աճեցնելու համար, մարդիկ, վորոնք դուրկ են իրենց արժանապատւության գղացումից և այդ պատճառով վոչ մի բնդհանուր բան չունեն բոլշիխիմի հետ:

Վերցնենք, որինակ, բնիկներ Միրդոյանին և Վաչոտին: Դրանց՛ց ստաջիեր Ղազարխատանի յերկրա-յին կուսակցական կազմակերպության քարտուղարն և,

յերկրորդը՝ Յարսուլայի մարզային կուսակցական  
կազմակերպութեան քարտուղարը: Այդ մարդիկ մեր  
չբջանում հետին աշխատողներ չեն: Իսկ ի՞նչպես են  
նրանք ընտրում աշխատողներին: Առաջինը Ազրբեյջանից  
և Ռւբայից, վորտեղ նա աշխատում եր առաջ, իր  
հետ Ղազախստան ե քաշ տվել 30-40 հոգի «իր» մարդ-  
կանց և պատասխանատու պոստերի յե դրել նրանց Ղա-  
զախստանում: Յերկրորդը՝ Դոնրասից, վորտեղ նա ա-  
ռաջ աշխատում եր, իր հետ Յարսուլայի ե քաշ տվել  
տասնյակից ավելի նույնպես «իր» մարդկանց և նրանց  
դրել ե նույնպես պատասխանատու պոստերում: Հե-  
տևաբար, ընկեր Միրզոյանն ունի իր արտելը: Իր ար-  
տելն ունի նաև ընկեր Վախտովը: Մի՞թե չեր կարելի  
աշխատողներ ընտրել տեղական մարդկանցից, ղեկա-  
վարվելով մարդկանց ընտրութեան և դասավորման  
բոլշևիկյան հայտնի կանոնով: Իհարկե, կարելի յեր:  
Իսկ ինչո՞ւ նրանք չարին այդ: Վորոհետև նրանք խախ-  
տում են աշխատողների ընտրութեան բոլշևիկյան կա-  
նոնը, վորը բացառում ե մեչչանական - քաղքենիական  
մտայնման հնարավորութեանը, բացառում ե աշխա-  
տողներին ընտանեկանութեան ու արտելայնութեան  
հատկանիշներով ընտրելու հնարավորութեանը: Բացի  
դրանից, վորպես աշխատողներ ընտրելով անձնապես  
նվիրված մարդկանց, այդ ընկերներն, ըստ յերևու-  
թին, ցանկանում ե յին իրենց համար ստեղծել վորոշ  
անկախութեան իրադրութեան ինչպես տեղական  
մարդկանց վերարեբմամբ, այնպես և կուսակցութեան  
կենտրոնի վերարեբմամբ: Յենթադրենք, վոր ընկեր-  
ներ Միրզոյանը և Վախտովը այս կամ այն հանգամանք-  
ների շնորհիվ իրենց այժմյան աշխատանքի վայրից

կփոխադրվեն վորևէ այլ տեղ: Ի՞նչպես պետք է նրանք վարվեն այդ դեպքում իրենց «պոչերի» նկատմամբ: Մի՞թե նրանք պետք է ստիպված լինեն այդ «պոչերը» նորից քաշ տալ իրենց աշխատանքի նոր վայրերը:

Ահա թե ինչպիսի արսուրդի յե հասցնում աշխատողներին ճիշտ ընտրության ու զասավորման բուշեիկյան կանոնի խախտումը:

4) Ի՞նչ է նշանակում ստուգել աշխատողներին, ստուգել առաջադրանքի կատարումը:

Ստուգել աշխատողներին, այդ նշանակում է ստուգել նրանց վոչ թե նրանց խոստումներով ու դեկլարացիաներով, այլ նրանց աշխատանքի արդյունքներով:

Ստուգել առաջադրանքների կատարումը, այդ նշանակում է ստուգել դրանք վո՛չ միայն գրասենյակում և վո՛չ միայն ձեռիան հաշվետվություններով, այլ նախ և առաջ դրանք ստուգել աշխատանքի վայրում, կատարման փաստական արդյունքներով:

Հարկավո՞ր է արդյոք առհասարակ այդպիսի ստուգում: Անպայման, հարկավոր է: Հարկավոր է նախ՝ այն պատճառով, վոր միայն այդպիսի ստուգումըն է հնարավորություն տալիս ճանաչելու աշխատողին, վորոչելու նրա իսկական հատկությունները: Հարկավոր է, յերկրորդ՝ այն պատճառով, վոր միայն այդպիսի ստուգումն է հնարավորություն տալիս վորոչելու գործադիր ապարատի արժանիքներն ու թերությունները: Հարկավոր է, յերրորդ՝ այն պատճառով, վոր միայն այդպիսի ստուգումն է հնարավորություն տալիս վորոչելու հենց առաջադրանքների արժանիքներն ու թերությունները:

Վորոչ ընկերներ կարծում են, թե մարդկանց ստու-

գել կարելի յե միայն վերելից, — յերբ ղեկավարներն իրենց ղեկավարած մարդկանց ստուգում են նրանց աշխատանքի արդյունքներով: Այդ ճիշտ չե: Ստուգումը վերելից, իհարկե, հարկավոր է, վորպես մարդկանց ստուգելու և առաջադրանքների կատարումն ստուգելու իրական միջոցներից մեկը: Բայց վերելից ստուգելը դեռ բնավ չի սպառում ստուգման ամբողջ գործը: Գոյություն ունի նաև մի այլ տեսակի ստուգում, ստուգում՝ ներքևից, յերբ մասսաները, յերբ ղեկավարվողներն ստուգում են ղեկավարներին, նշում են նրանց սխալները և մատնանշում են այդ սխալներն ուղղելու ճանապարհները: Այդ տեսակ ստուգումը մարդկանց ստուգելու ամենախիսկական յեղանակներից մեկն է:

Կուսակցական մասսաներն իրենց ղեկավարներին ստուգում են ակտիվի ժողովներում, կոնֆերենցիաներում, համագումարներում, նրանց հաշվետվությունները լսելու միջոցով, թերությունները քննադատելու միջոցով, վերջապես այս կամ այն ղեկավար ընկերներին ղեկավար որդանների մեջ ընտրելու կամ չընտրելու միջոցով: Գեմոկրատական ցենտրալիզմի ճշգրիտ կիրառումը կուսակցության մեջ, ինչպես այդ պահանջում է մեր կուսակցության կանոնադրությունը, կուսակցական որդանների անպայման ընտրականությունը, թեկնածուներ առաջադրելու և թեկնածուների դեմ առարկելու իրավունքը, վսակ քվեարկությունը, քննադատության ու ինքնաքննադատության ազատությունը, — այս բոլոր և դրանց նման միջոցառումներն անհրաժեշտ է կենսագործել ի միջի այլոց նրա համար, վորպեսզի հեշտացվի կուսակցության ղեկավարներին

ստուգումն ու վերահսկողութիւնը կուսակցական մաս-  
սաների կողմից:

Անկուսակցական մասսաներն իրենց տնտեսապար-  
ներին, պրոֆմիութենական ու այլ ղեկավարներին  
ստուգում են անկուսակցական ախտիւներում, ամեն  
տեսակի մասսայական խորհրդակցութիւններում, վոր-  
տեղ նրանք լսում են իրենց ղեկավարների հաշվետու-  
թիւնները, քննադատում են թերութիւնները և նշում  
են այդ թերութիւններն ուղղելու ճանապարհները:

Վերջապես, ժողովուրդը յերկրի ղեկավարներին  
ստուգում է Սորհրդային Միութեան իշխանութեան որ-  
դանների ընտրութիւնների ժամանակ ընդհանուր, հա-  
վասար, ուղղակի և զաղանի քվեարկութեան միջո-  
ցով:

Խնդիրն այն է, վարպետի վերեւից ստուգելը միաց-  
վի ներքեւից յեկող ստուգման հետ:

5) Ի՞նչ է նշանակում կադրերին սովորեցնել նրանց  
սեփական սխալների վրա:

Լենինը սովորեցնում էր, վոր կուսակցութեան  
սխալների բարեխիղճ բացահայտումը, այդ սխալներն  
առաջացնող ստուգանքների ուսումնասիրութիւնը և  
այդ սխալներն ուղղելու անհրաժեշտ ճանապարհներին  
նշումը կուսակցական կադրերի ճիշտ ուսուցման ու  
դաստիարակման, բանվոր դասակարգի և աշխատավոր  
մասսաների ճիշտ ուսուցման ու դաստիարակման ամե-  
նատղից միջոցներից մեկն է հանդիսանում: Լենինն  
ասում է.

«Բաղարական կուսակցութեան վերաբերմունքը  
դեպի իր սխալները կուսակցութեան լրջութեան և  
իր դասակարգի նկատմամբ ու աշխատավոր մաս-

տաների նկատմամբ իր ունեցած պարտականու-  
թյունները գործնականում կատարելու կարևորա-  
գույն ու ամենաճիշտ չափանիշներից մեկն է: Բա-  
ցահայտորեն խոստովանել սխալը, բացահայտել  
նրա պատճառները, վերլուծել այդ սխալը ծնող  
իրադրությունը, ուշադիր քննարկել սխալն ուղղե-  
լու միջոցները, ահա այս է լուրջ կուսակցության  
հատկանիշը, — ահա այս է կուսակցության կողմից  
իր պարտականությունների կատարումը, ահա այս  
է դասակարգի, իսկ ապա նաև մասսայի դաստիար-  
ակումն ու ուսուցումը»:

Այդ նշանակում է, վեր բռնկելիկների պարտակա-  
նությունն է հանդիսանում վոչ թե իրենց սխալների  
ավազումը, վոչ թե իրենց սխալների վերաբերյալ հար-  
ցից խուսափելը, ինչպես այդ լինում է մեզ մոտ հա-  
ճախ, այլ իր սխալների ազնիվ ու բացահայտ խոստո-  
վանությունը, այդ սխալներն ուղղելու ճանապարհներն  
ազնվորեն ու բացահայտորեն նշելը, իր սխալներն ազ-  
նվորեն ու բացահայտորեն ուղղելը:

Յես չեյի ասի, վոր շատերը մեր ընկերներից հա-  
ճույքով դիմեցին այդ դործին: Բայց բռնկելիկները,  
յեթե նրանք իսկապես ցանկանում են բռնկելիկներ լի-  
նել, պետք է իրենց մեջ արիություն դաննն բացելի-  
բաց խոստովանելու իրենց սխալները, բացահայտելու  
գրանց պատճառները, նշելու այդ սխալներն ուղղելու  
ճանապարհները և դրանով ոգնելու կուսակցությանը  
կադրերին ճիշտ ուսուցում և քաղաքական ճիշտ դաս-  
տիարակություն տալու: Վորովհետև միայն այս ուղու  
վրա, միայն բացահայտ ու ազնիվ ինքնաքննադատու-  
թյան իրադրության մեջ կարելի է դաստիարակել իս-

կապես բուլղարիայի կաղերեր, կարելի յե դաստիարակել  
խակական բուլղարիայի լիդերներ:

Յերկու որինակ, վորոնք ցուցադրում են լենինի  
դեբուլթի ճշտութունը:

Վերցնենք, որինակ, մեր սխալները կոլտնտեսային  
չինարարութեան ասպարեզում: Դուք պետք ե վոր հի-  
շեք 1930 թվականը, յերբ մեր կուսակցական ընկեր-  
ները մտածում եյին գյուղացիութեանը կոլտնտեսային  
չինարարութեան փոխադրելու ամենարդդ հարցը լու-  
ծել ինչ-վոր մի Յ-Ա ամսվա ընթացքում, և յերբ կուսակ-  
ցութեան կենտրոնական կոմիտեն հարկադրված յեղավ  
հետ քաշել տարվող-վող և որովոր ընկերներին: Այդ ամ-  
ենալուտանգամ վոր ժամանակաշրջանները մեկն եր մեր  
կուսակցութեան կյանքում: Սխալն այն եր, վոր մեր  
կուսակցական ընկերները մոռացել եյին կոլտնտեսային  
չինարարութեան կամավորութեան մասին, մոռացել ե-  
յին, վոր չի կարելի գյուղացիներին կոլտնտեսային ու-  
ղին փոխադրել վարչարարական ճնշման միջոցով, մո-  
ռացել եյին, վոր կոլտնտեսային չինարարութեանը պա-  
հանջում ե վոչ թե մի քանի ամսվա, այլ մի քանի  
տարվա մանրագինն ու մտածված աշխատանք: Նրանք  
մոռացել եյին այդ մասին և չեյին ուզում ընդունել ի-  
րենց սխալները: Դուք պետք ե հիշեք, վոր կենտկոմի  
ցուցումը հաջողութեանները հետևանքով առաջացած  
դիտարարութեան մասին և այն մասին, վոր մեր տեղերի  
ընկերներն առաջ չվագեն, անտես առնելով ունալ  
իրագրութեանը, — սկիներով դիտարարվեց: Բայց  
դա կենտկոմին հետ չպահեց այն բանից, վոր նա հո-  
սանքի գեմ գնար և մեր կուսակցական ընկերներին  
չըջեր ճիշտ ուղու վրա: Յեկ ի՞նչ: Այժմ բոլորե,

համար պարզ ե, վոր կուսակցությունը հասաւ իր նպատակին, մեր կուսակցական ընկերներին շուտ տալով ճիշտ ուղու վրա: Այժմ մենք կոլտնտեսասփին շինարարության և կոլտնտեսային դեկալարության ասպարեզում ունենք դյուզացիների միջից յելած տասնյակ հազարավոր հիանալի կազմեր: Այդ կազմերն աճել ու դաստիարակվել են 1930 թվականի սխալների վրա: Բայց մենք այժմ չեյինք ունենա այդ կազմերը, յեթե կուսակցությունն այն ժամանակ չզիտակցեր իր սխալները և ժամանակին չուղղեր դրանք:

Մի այլ որինակ, արդեն արդյունաբերական շինարարության բնագավառից: Յես նկատի ունեմ մեր սըխալները Շախտիի վնասարարության ժամանակաշրջանում: Մեր սխալներն այն եյին, վոր մենք հաշվի չեյինք առել արդյունաբերության ասպարեզում մեր կազմերի տեխնիկական հետամնացության ամբողջ վտանգավորությունը, մենք հաշտվում եյինք այդ հետամնացության հետ և մտածում եյինք սոցիալիստական արդյունաբերական լայն շինարարությունը ծալալել թշնամարար տրամադրված մասնագետների ոգնությամբ, մեր տնտեսական կազմերին դատասպարտելով բուրժուական մասնագետներին կից վատ կոմիսարների դերին: Դուք պետք ե վոր հիշեք, թե մեր տնտեսական կազմերն այն ժամանակ ինչպիսի դժկամությամբ եյին խոստովանում իրենց սխալները, ինչպիսի դժկամությամբ եյին խոստովանում նրանք իրենց տեխնիկական հետամնացությունը և ինչ աստիճան դժվար եյին յուրացնում նրանք «տեխնիկային տիրապետելու» լոզունգը: Յեղ ի՞նչ: Փաստերը ցույց են տալիս, վոր «տեխ-

Նիկիային տիրապետելու» լողունճն ունեցաւ իր ներդոր-  
ծությունը և տվեց իր հաջող արդյունքները: Այժմ  
մենք ունենք սասնյակ ու հարյուր հազարավոր բոլ-  
բիկիան հիանալի տնտեսական կադրեր, վորոնք ար-  
գեն տիրապետել են տեխնիկային և առաջ են մղում  
մեր արդյունաբերությունը: Բայց այդ կադրերը մենք  
այժմ չեյինք ունենա, յեթե կուսակցությունը տեղի  
տար տնտեսավարների համառության առջև, վորոնք  
չեյին ցանկանում խոստովանել իրենց տեխնիկական հե-  
տամնացությունը, յեթե կուսակցությունը չդիտակցեր  
այն ժամանակ իր սխալները և չուղղեր նրանք ժամա-  
նակին:

Մի քանի ընկերներ ասում են, թե նպատակա-  
հարմար չե բացահայտորեն խոսել իրենց սխալների  
մասին, վորովհետև սեփական սխալների բացահայտ  
խոստովանությունը կարող է մեր թշնամիների կողմից  
գնահատվել վորպես մեր թուլությունը և կարող է ող-  
տադործվել նրանց կողմից: Դրանք դատարկ բաներ են,  
ընկերներ, կատարյալ դատարկ բաներ: Մեր սխալնե-  
րի բացահայտ խոստովանությունը և այդ սխալներն  
ազնվորեն ուղղելն, ընդհակառակը, կարող է միայն  
ուժեղացնել մեր կուսակցությանը, բարձրացնել մեր  
կուսակցության հեղինակությունը բանվորների, գյու-  
ղացիների, աշխատավոր ինտելիգենցիայի աչքում,  
բարձրացնել մեր պետության ուժն ու հզորությունը:  
Իսկ այդ դիտավորն է: Մեզ հետ լինեն միայն բանվոր-  
ները, գյուղացիները, աշխատավոր ինտելիգենցիան,  
իսկ մնացածն ամենը բալ կզնա:

Մյուս ընկերներն ասում են, թե մեր սխալների  
բացահայտ խոստովանությունը կարող է հասցնել վոչ

Թե մեր կազմերի ուսուցման և ամրապնդման, այդ նրանց թուլացման ու քայքայման, թե մենք պետք ե խնայենք ու պահպանենք մեր կազմերը, թե մենք պետք ե խնայենք նրանց ինքնասիրությունն ու հանգրստությունը: Իրա համար նրանք առաջարկում են սքողել մեր ընկերների սխալները, թուլացնել քննադատության ուժը, իսկ ե՛լ ավելի լավ կլինի, յեթե մենք անցնենք այդ սխալների կողքով: Սյուպրիսի գրությունը վոչ միայն արժատապես սխալ ե, այլ և վերին աստիճանի վտանգավոր, վտանգավոր նախ և առաջ այն կազմերի համար, վորոնց ցանկանում են «խնայել» և «պահպանել»: Մնայել ու պահպանել կազմերին նրանց սխալներն սքողելու միջոցով, այդ նշանակում ե հաստատապես կորստյան մատնել հենց այդ կազմերին: Մենք հաստատապես կործանած կլինե՞լինք մեր կործանողացին բոլշևիկյան կազմերին, յեթե չբացահայտե՞լինք 1930 թվականի սխալները և այդ սխալների վրա չսովորեցնե՞լինք նրանց: Մենք հաստատապես կործանած կլինե՞լինք մեր արդյունաբերական բոլշևիկյան կազմերին, յեթե մենք չբացահայտե՞լինք մեր ընկերների սխալները Շախտիի մնասարարության ժամանակաշրջանում և այդ սխալների վրա չսովորեցնե՞լինք մեր արդյունաբերական կազմերին: Ով մտածում ե խնայել մեր կազմերի ինքնասիրությունը՝ նրանց սխալներն սքողելու միջոցով, նա կործանում ե թե՛ կազմերին, թե՛ կազմերի ինքնասիրությունը, վորովհետև նա այդ կազմերի սխալներն սքողելով՝ հեշտացնում ե նոր, դուրս ե՛լ ավելի լուրջ սխալների կրկնությունը, վորոնք, պետք ե յենթադրել, վոր կհասցնեն

կադրերի լիակատար տասլարման ի վնաս նրանց «ինքնասխրության» ու «հանդատության»:

6) Լենինը մեզ ուսուցանում էր վոչ միայն սովորեցնել մասսաներին, այլ և սովորել մասսաներից:

Ի՞նչ է նշանակում այդ:

Այդ նշանակում է, վոր մենք, ղեկավարներս, չըպետք է ամբարտալանանանք, պետք է հասկանանք, վոր յեթե մենք կենտկոմի անդամներ կամ ժողկոմներ ենք, ապա այդ դեռ չի նշանակում, վոր մենք տիրապետում ենք այն բոլոր գիտելիքներին, վորոնք անհրաժեշտ են, վորպեսզի ճիշտ գեկավարենք: Աստիճանն ինքնին գիտելիքներ և փորձ չի տալիս: Կոչումն—առավել ևս:

Այդ նշանակում է, վոր հենց միայն մեր փորձը, ղեկավարների փորձը դեռ բավական չէ ճիշտ գեկավարելու համար, վոր հետևապես անհրաժեշտ է մեր փորձը, ղեկավարների փորձը լրացնել մասսաների փորձով, կուսակցական մասսայի փորձով, բանվոր գասակարգի փորձով, ժողովրդի փորձով:

Այդ նշանակում է՝ վոչ մի բոպե չթուլացնել, իսկ առավել ևս չխզել մեր կապերը մասսաների հետ:

Այդ նշանակում է, վերջապես, զգայուն կերպով ունկնդրել մասսաների ձայնին, կուսակցության շարքային անդամների ձայնին, այսպես կոչված «վոքը մարդկանց» ձայնին, ժողովրդի ձայնին:

Ի՞նչ է նշանակում ճիշտ գեկավարել:

Այդ բնավ չի նշանակում նստել դրասենյակում և գիրեկտիվներ գրել:

Ճիշտ գեկավարել—այդ նշանակում է.

առաջին՝ դտնել հարցի ճիշտ լուծումը: Իսկ ճիշտ

լուծում գտնելն անհնարին և առանց մասսաների փորձի հաշվառման, մասսաների, փորոնք իրենց սեփական մեջքի վրա յեն փորձում մեր ղեկավարութեան արդյունքները:

յերկրորդ՝ կազմակերպել ճիշտ փորոշման կենսագործումը, փորը, սակայն, չի կարելի կատարել առանց մասսաների կողմից ուղղակի ոգնություն ստանալու.

յերրորդ՝ կազմակերպել այդ փորոշման կատարման ստուգումը, փոր դարձյալ հնարավոր չե կատարել առանց մասսաների ուղղակի ոգնութեան:

Մենք, ղեկավարներս, իրերը, դեպքերը, մարդկանց տեսնում ենք միայն մեկ կողմից, յես կասեյի—վերևից, մեր տեսողութեան դաշտը, հետևաբար, ավելի կամ պակաս չափով սահմանափակված ե: Մասսաները, ընդհակառակը, իրերը, դեպքերը, մարդկանց տեսնում են մյուս կողմից, յես կասեյի—ներքևից, նրանց տեսողութեան դաշտը, հետևաբար, նույնպես փորոշ չափով սահմանափակված ե: Հարցի ճիշտ լուծում ստանալու համար պետք ե միացնել այդ յերկու փորձերը: Միայն այդ դեպքում ղեկավարութեանը ճիշտ կլինի:

Ահա թե ինչ ե նշանակում փոշ միայն սովորեցնել մասսաներին, այլև սովորել մասսաներից:

Յերկու որինակ, փորոնք ցուցադրում են լինելի այդ դրույթի ճիշտ լինելը:

Այդ սրանից մի քանի տարի առաջ եր: Մենք, կենտկոմի անդամներս, քննարկում եյինք Դոնրասում դրութեանը բարելավելու հարցը: Չեռնարկումներէլ այն նախադիժը, փորը ներկայացրել եր Մանր Արդյուն-

Մարերության Ժողովոմտարը, բացահայտորեն անբա-  
 վարար էր: Յերեք անգամ նախադիժը վերադարձրինք  
 Մանր Արդյունարերության Ժողովոմատ: Յերեք անգամ  
 Մանր Արդյունարերության Ժողովոմատից ստացանք  
 տարրեր նախադժեր: Յեվ, այնուամենայնիվ, չեր կա-  
 րելի դրանք բավարար համարել: Վերջապես մենք  
 վարդապետ Գրիգորից հրավիրել մի քանի բանվորնե-  
 րի և շարքային տնտեսավարների ու պրոֆիտուսթենական  
 աշխատողների: Յերեք որ մենք գրուցում էյինք այդ  
 ընկերների հետ: Յեվ մենք բոլորս, Կենտկոմի անդամ-  
 ներս, պետք է խոստովանեյինք, վրո միայն նրանք,  
 այդ շարքային աշխատողները, այդ «փոքր մարդիկ»  
 հարողացան հուշել մեզ ճիշտ վարդապետ: Գուք պետք է  
 վրո հիշեք Կենտկոմի և Ժողովոմխորհի հայանի վարդա-  
 շումը Գրիգորի ամիսի հանույթն ուժեղացնելու մի-  
 ջոցառումների մասին: Ահա Կենտկոմի և Ժողովոմխոր-  
 հի հենց այդ վարդապետը, վրո մեր բոլոր ընկերների  
 կողմից ընդունված է իբրև ճիշտ և նույնիսկ հուշակա-  
 վրո վարդապետ, մեզ հուշել են ներքևից յեկած հասարակ  
 մարդիկ:

Մի այլ որինակ: Յեո նկատի ունեմ ընկեր Նիկո-  
 լայնիկոյի որինակը: Ռ՞վ է Նիկոլայենիկոն: Նիկոլա-  
 յենիկոն կուսակցության շարքային անդամ է: Նա  
 սովորական «փոքրիկ մարդ է»: Մի ամբողջ տարի նա  
 աղղանչաններ եր տալիս Կիեվի կուսակցական կողմա-  
 կերպության մեջ դրությունն անրարենպաստ լինելու  
 մասին, մերկացնում էր ընտանեկանությունը, քաղքե-  
 նիական — մեղանական մտտեցումը դեպի աշխատողնե-  
 րը, ինքնաքննադատության ճնշումը, արոցիխատական  
 վնասարարների գերութությունը: Նրանից խուսափում

եյին ինչպէս աներևո ճամփից: Վերջապէս նրանից առ  
զատվելու համար վերցրին և նրան վտարեցին կուս  
սակցութեանից: Վո՛չ Կիեվի կաղմակերպութեանը,  
վո՛չ Ուկր. Կ (բ)Կ Կենտկոմը չողնեցին նրան ճշմարտ  
տութեան հասնելու: Միայն կուսակցութեան Կենտրոն  
նական կոմիտեյի միջամտութեանն օգնեց բաց անելու  
այդ խճճված հանգույցը: Իսկ ի՞նչ պարզվեց զործք  
քննելուց հետո: Պարզվեց, վոր Նիկոլայենկոն իրավա  
ցի յի յեղել, իսկ Կիեվի կաղմակերպութեանը յեղել և  
անիրավացի: Վո՛չ ամելի, վո՛չ պակաս: Իսկ ո՞վ և  
Նիկոլայենկոն: Նա, իհարկե, Կենտկոմի անդամ չէ,  
Ժողկոմ չէ, նա Կիեվի մարդային կաղմակերպութեան  
քարտուղարը չէ, նա նույնիսկ վորեւէ բլջի քարտուղար  
ել չէ, նա կուսակցութեան սոսկ հասարակ շարքային  
անդամ է:

Ինչպէս տեսնում եք, հասարակ մարդիկ յերբեմն  
չառ ամելի մոտիկ են լինում ճշմարտութեանը, քան  
թե վորոչ բարձրագուս հիմնարկներ:

Կարելի յեր դարձյալ տասնյակ ու հարյուրավոր  
այսպիսի որինակներ բերել:

Այսպիսով, դուրս և գալիս, վոր մեր զործք ղեկա  
վարելու համար հենց միայն մեր փորձը, ղեկավարնե  
րի փորձը ղեռ շատ հեռու յե բավարար լինելուց: Զիշտ  
ղեկավարելու համար անհրաժեշտ և ղեկավարների  
փորձը լրացնել կուսակցական մասնայի փորձով,  
բանվոր դասակարգի փորձով, աշխատավորների  
փորձով, այսպէս կոչված «փոքր մարդկանց» փորձով:  
Իսկ յե՞րբ և այդ հնարավոր:

Այդ հնարավոր և միայն այն դեպքում, յեթե ղե-

կա՛վարները մասսաների հետ կապված են ամենասերտ կերպով, յեթե նրանք կապված են կուսակցական մասսաների հետ, բանվոր դասակարգի հետ, դյուղացիության հետ, աշխատավոր ինտելիգենցիայի հետ:

Կապը մասսաների հետ, այդ կապի ամրապնդու՞թը, մասսաների ձայնին ունկնդրելու պատրաստակամությունը — ահա թե ինչի մեջ է բոլշևիկյան դեկա՛վարության ուժն ու անպարտելիությունը:

Կարեւրի յե վորպես կանոն ընդունել, վոր քանի բոլշևիկները կապ են պահպանում ժողովրդի լայն մասսաների հետ, նրանք անպարտելի կլինեն: Յեւ, ընդհակառակը, բավական է միայն, վոր բոլշևիկները կտրվեն մասսաներից և կորցնեն նրանց հետ ունեցած կապը, բավական է միայն, վոր նրանք ծածկվեն բյուրոկրատական ժանգով, վորպեսզի նրանք զբրե՛վին ամեն ուժից և դատարկ բանի վերածվեն:

Հին հույներն իրենց առասպելաբանության սիստեմում ունեյին մի հուշակավոր հերոս — Անթեյը, վորն, ինչպես ասում է առասպելաբանությունը, յեղել է ծովերի աստված Պոսեյդոնի և հողի աստվածուհի Գեյայի վորդին: Նա իրեն հատկապես կապված էր զգում իր մոր հետ, վորը ծնել էր նրան, կերակրել և դաստիարակել: Չկար այնպիսի հերոս, վորին նա, այդ Անթեյը չհաղթեր: Նա համարվում էր անպարտելի հերոս: Ինչո՞ւմն էր նրա ուժը: Այդ ուժն այն բանի մեջ էր, վոր ամեն անգամ, յերբ հակառակորդի դեմ մղած պայքարում նա նեղն էր ընկնում, նա չփվում էր գետնին, իր մորը, վորը ծնել ու կերակրել էր նրան, և նոր ուժ էր ստանում: Բայց նա, այնուամենայնիվ, ուներ իր թույլ տեղը — այդ վորևէ կերպ հողից կը-

տըրվելու յտանդն եր: Թշնամիները հաշիվի եյին առնում նրա այդ թուլությունը և դարանակալում եյին նրան: Յեւ մահա, դանմեց մի թշնամի, վորն ոգտագործեց նրա այդ թուլությունը և հաղթեց նրան: Դա Հերկուլեսն եր: Բայց Հերկուլեսն ի՞նչպէս հաղթեց նրան: Նա Անթեյին կտրեց դեմնից, բարձրացրեց ողի մեջ, խլեց նրանից հողին շփվելու հնարավորությունը և այդպիսով ողի մեջ խեղդեց նրան:

Յես կարծում եմ, վոր բոլշևիկները մեզ հիշեցնում են հունական առասպելաբանության հերոս Անթեյին: Նրանք նույնպէս, ինչպէս և Անթեյը, ուժեղ են նրանով, վոր կապ են պահպանում իրենց մոր հետ, մաստաների հետ, վորոնք ծնել, սնել և դաստիարակել են նրանց: Յեւ քանի նրանք կապ են պահպանում իրենց մոր հետ, ժողովրդի հետ, նրանք բոլոր յերաշխիքներն ունեն՝ անպարտելի մնալու համար:

Մրա մեջ ե բոլշևիկյան ղեկավարության անպարտելիության բանալին:

7) Վերջապէս դարձյալ մեկ հարց: Յես նկատի ունեմ մեր վորոշ կուսակցական ընկերների ձեւական ու անհողի-բյուրոկրատական վերաբերմունքը ղեպի կուսակցության առանձին անդամների բախտը, ղեպի կուսակցության անդամներին կուսակցությունից վրտարելու հարցը, կամ թե ղեպի վտարվածներին կուսակցության անդամի իրավունքների մեջ վերականգնելու հարցը: Բանն այն ե, վոր մեր վորոշ կուսակցական ղեկավարներ տառապում են մարդկանց նկատմամբ, կուսակցության անդամների նկատմամբ, աշխատողների նկատմամբ ուշադրության բացակայությամբ: Ավելին, նրանք չեն ուսումնասիրում կուսակ-

ցության անդամներին, չդիտեն ինչո՞վ են սպրտմ  
նրանք և ինչպես են նրանք աճում, առհասարակ չեն  
ճանաչում աշխատողներին: Ուստի նրանք անհատական  
մոտեցում չունեն դեպի կուսակցության անդամները,  
դեպի կուսակցության աշխատողները: Յեվ հենց այն  
պատճառով, վոր նրանք անհատական մոտեցում չու-  
նեն կուսակցության անդամների և կուսակցական աշ-  
խատողների գնահատման ժամանակ, նրանք սովորա-  
բար գործում են ինչպես պատահի—կամ անհիմն կեր-  
պով առանց վորևի չափի դովարանում են, կամ թե  
նույնպես անհիմն կերպով և առանց վորևե չափի խա-  
րաղանում են նրանց, վտարում են կուսակցությունից  
հազարներով ու տասնյակ հազարներով: Այդպի-  
սի դեպքերներն առհասարակ աշխատում  
են մտածել տասնյակ հազարներով, առանց հոգ  
տանելու «միավորների» մասին, կուսակցության ա-  
ռանձին անդամների մասին, նրանց բախտի մասին:  
Հազարավոր ու տասնյակ հազարավոր մարդկանց կու-  
սակցությունից վտարելը նրանք համարում են դա-  
տարի բան, իրենց միխթարելով այն բանով, թե մեր  
կուսակցությունն ունի յերկու միլիոն անդամ և տաս-  
նյակ հազարավոր վտարվածները չեն կարող վորևե  
բան փոխել կուսակցության գրության մեջ: Բայց  
այդպես կարող են մոտենալ կուսակցության անդամ-  
ներին միայն բոտ եյության խորապես հակակուսակ-

### ցական մարդիկ:

Մարդկանց նկատմամբ, կուսակցության անդամ-  
ների և կուսակցական աշխատողների նկատմամբ այդ-  
պիսի անհոդի վերարբմունքի հետևանքով կուսակ-  
ցության մեկ մասի մեջ արհեստականորեն ստեղծվում

և դժգոհություն ու դուրսդուր, իսկ արոցկիստանիան  
յերկերեսանիները ճարպիկ կերպով իրենց ճանկն են  
դրում այդպիսի գազազած ընկերներին և նրանց իրենց  
հետևից հմտորեն քաշ են տալիս արոցկիստական վնաս-  
աբարբության ճահիճը:

Ինքնըստինքյան արոցկիստաները յերբեք մեծ ուժ  
չեն ներկայացրել մեր կուսակցության մեջ: Հիշեցե՞ք  
մեր կուսակցության մեջ տեղի ունեցած վերջին դիս-  
կուսիան 1927 թվականին: Այդ իսկական կուսակցա-  
կան ռեֆերենդում երբ Կուսակցության 354 հազար  
անդամից այն ժամանակ քվեարկեց կուսակցության  
730 հազար անդամ: Իրանցից բոլշևիկները ողտին,  
կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի ողտին՝  
ընդդեմ արոցկիստաների՝ քվեարկեցին կուսակցության  
724 հազար անդամ. արոցկիստաների ողտին՝ կուսակ-  
ցության 4 հազար անդամ, այսինքն մոտավորապես  
կես տոկոսը, և ձեռնպահ մնացին կուսակցության 2600  
անդամ: Քվեարկությանը չմասնակցեցին կուսակցու-  
թյան 123 հազար անդամ: Նրանք չմասնակցեցին կամ  
այն պատճառով, վոր շրջագայության մեջ էլին դրա-  
նրվում, կամ թե այն պատճառով, վոր գտնվում էլին  
հերթափոխերում: Յեթե արոցկիստաների ողտին քր-  
վեարկած 4 հազար հոգու վրա ավելացնենք բոլոր ձե-  
ռնպահ մնացածներին, — յենթադրելով, վոր նրանք  
նույնպես համակրում էլին արոցկիստաներին, — և յե-  
թե այդ դուժարին ավելացնենք վոչ թե քվեարկու-  
թյանը չմասնակցածների կես տոկոսը, ինչպես այդ  
պիտք եր անել ըստ կանոնի, այլ չմասնակցածները  
հինգ տոկոսը, այսինքն կուսակցության մոտ 6 հա-  
զար անդամի, ուստ կատայվի կուսակցության մոտ 12

Հազար անդամ, վորոնք այս կամ այն կերպ Համա-  
 կրում եյին տրոցկիղմին: Ահա ձեզ՝ պարոնայք տրոց-  
 կիստների ամբողջ ուժը: Դրան ավելացրեք այն հան-  
 դամանքը, վոր այդ թվին պատկանողներից շատերը  
 հիասթափուկեցին տրոցկիղմից ու հեռացան նրանից, և  
 դուք պատկերացում կստանաք տրոցկիստական ուժե-  
 րի չնչինութեան մասին: Յեւ յեթե, չնայած դրան,  
 տրոցկիստական վնասարարները, այնուամենայնիւ,  
 վորոշ ուղերվներ ունեն մեր կուսակցութեան մոտեր-  
 քում, ապա այդ այն պատճառով, վոր կուսակցու-  
 թյունից վտարելու և վտարվածների վերականգնման  
 հարցում մեր վորոշ ընկերների սխալ քաղաքականու-  
 թյունը, մեր վորոշ ընկերների անհոգի վերաբերմուն-  
 քը դեպի կուսակցութեան առանձին անդամների ու ա-  
 ռանձին աշխատողների բախտը, արհեստականորեն ա-  
 ճեցնում են դժգոհների ու դադաղածների քանակու-  
 թյունը և այդպիսով տրոցկիստների համար ստեղծում  
 են այդ ուղերվները:

Վտարում են մեծ մասամբ այսպես կոչված պա-  
 սիվութեան համար: Ի՞նչ բան է պասսիվութեանը:  
 Բանից դուրս է դալիս, դանում են, վոր յեթե կուսակ-  
 ցութեան անդամը չի յուրացրել կուսակցութեան ծրա-  
 դիրը, ապա նա պասսիվ է և յենթակա յե վտարման:  
 Իայց չե՞ վոր այդ սխալ է, ընկերներ: Ձի կարելի  
 այդպես տառակերութեամբ մեկնարանել մեր կուսակ-  
 ցութեան կանոնադրութեանը: Կուսակցութեան ծրա-  
 դիրը յուրացնելու համար պետք է իսկական մարք-  
 սիստ լինել, ստուգված ու տեսականորեն պատրաստ-  
 ված մարքսիստ: Յես չդիտեմ, մեզ մոտ շա՞տ կդառնան  
 արդյոք կուսակցութեան այնպիսի անդամներ, վորոնք

արդեն յուրացրել են մեր ծրագիրը, դարձել են իսկա-  
կամ մարքսիստներ, տեսականորեն պատրաստված և  
ստուգված: Յեթև առաջ դնալու լինենք այդ ուղիով,  
ապա մենք ստիպված կլինեյինք կուսակցութեան մեջ  
թողնել միայն ինտելիգենտներին և առհասարակ գիտ-  
նական մարդկանց: Ո՞ւմ և պէտք այդպիսի կուսակ-  
ցութեան: Մենք ունենք կուսակցութեան անդամու-  
թեան մասին ստուգված և բոլոր փորձութեաններին  
գիմացած լենինյան ֆորմուլա: Այդ ֆորմուլայի հա-  
մաձայն՝ կուսակցութեան անդամ համարվում է նա,  
ով ընդունում է կուսակցութեան ծրագիրը, մուծում է  
անդամավճար և աշխատում է նրա կազմակերպութեան-  
ներից մեկում: Ուշագրութեան դարձրեք լենինյան  
ֆորմուլայի մեջ խոսվում է վոչ թե ծրագրի յուրաց-  
ման մասին, այլ ծրագիրն ընդունելու մասին: Մրանք  
յերկու միանգամայն տարրեր բաներ են: Ապացուցելու  
կարիք անդամ չկա, վոր այստեղ իրավացի չե կենինը  
և վոչ թե մեր այն կուսակցական ընկերները, վորոնք  
դասարկ տեղը չազակրատում են ծրագրի յուրացման  
մասին: Յե՛վ այդ հասկանալի չե: Յեթև կուսակցու-  
թեանը յերներ այն բանից, վոր կուսակցութեան ան-  
դամ կարող են լինել միայն այնպիսի ընկերներ, վո-  
րոնք արդեն յուրացրել են ծրագիրը և դարձել են տե-  
սականորեն պատրաստված մարքսիստներ, ապա նա  
կուսակցութեան մեջ չեր ստեղծի հազարավոր կուսակ-  
ցական խմբակներ, հարյուրավոր կուսակցական գրպ-  
րոցներ, վորտեղ կուսակցութեան անդամներին մարք-  
սիզմ են սովորեցնում և նրանց ոգնում են յուրացնելու  
մեր ծրագիրը: Միանգամայն պարզ է, վոր յեթև կու-  
սակցութեանն այդպիսի գպրոցներ ու խմբակներ է

կազմակերպում կուսակցութեան անդամները մեջ, ապա այդ այն պատճառով է, վոր նա գիտե, վոր կուսակցութեան անդամները դեռ չեն կարողացել յուրացնել կուսակցական ծրագիրը, դեռ չեն կարողացել տեսականորեն պատրաստված մարքսիստներ դառնալ:


Հետևաբար կուսակցութեան անդամութեան և կուսակցութեան վտարելու հարցում մեր քաղաքականութեանն ուղղելու համար անհրաժեշտ է վերջ դնել սպասիվութեան հարցի ներկայիս քայլադրույթական մեկնաբանութեանը:

Բայց մենք մի այլ մեղք ել ունենք այդ բնագավառում: Բանն այն է, վոր մեր ընկերները չեն ընդունում յերկու ծայրահեղութեանների միջինը: Բավական է միայն, վոր բանվորը, կուսակցութեան անդամ մի թեթև զանցանք կատարի, մեկ-յերկու անգամ ուշանա կուսակցական ժողովին, վորեւ պատճառով չմոծի անդամավճարը, վորպեսզի նրան մի ակնթարթում դուրս վունդեն կուսակցութեանից: Չեն հետաքրքրվում նրա զանցանքի աստիճանով, ժողովին չներկայանալու պատճառով, անդամավճարը չմոծելու պատճառով: Բյուրոկրատիզմն այդ հարցերի մեջ ուղղակի շտեմնաված է: Դժվար չէ հասկանալ, վոր հենց այդպիսի անհոգի քաղաքականութեան հետևանքով էր, վոր կուսակցութեանից դուրս շարժվեցին հիանալի կադրային բանվորներ, սքանչելի ստախանովականներ: Իսկ մի՞թե չէր կարելի նախքան նրանց կուսակցութեանից վտարելը նրանց նախազգուշացում անել, յեթե այդ չի ոգնում — ի ցույց դնել, կամ թե նկատողութեան անել, և յեթե այդ ել չի ոգնում — ժամ-

կես սահմանել ուղղվելու համար կամ, ծայրահեղ  
դեպքում, փոխադրել թեկնածու, բայց վոչ թե մեկ  
հարվածով վտարել կուսակցությունից: Իհարկե, կա-  
րելի չեր: Բայց դրա համար պահանջվում է ուշադիր  
վերաբերմունք մարդկանց նկատմամբ, կուսակցու-  
թյան անդամների նկատմամբ, կուսակցության ան-  
դամների բախտի նկատմամբ: Բայց հենց այդ է, վոչ  
սլակասում է մեր վորոչ ընկերներին:

Ժամանակն է, ընկերներ, վաղուց ժամանակն է  
վերջ դնելու այդ խայտառակությանը: (Ծափահարու-  
թյուններ):





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ՈՒ ԱՅԼ ՅԵՐԿԵՐԵՍԱՆԻՆԵՐԻՆ ԼԻԿՎԻԴԱ- ՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԶԵ- ԿՈՒՑՈՒՄ ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ)	«	«	5
I. Բաղափակաճ անհոգություն	«	«	6
II. Կապիտալիստական շրջապատումը	«	«	11
III. Արդի սրբցկիզմը	•	•	15
IV. Տնտեսական հաջողությունների ստվերոտ կողմերը	«	«	24
V. Մեր խնդիրները	«	«	29
ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ	«	«	48

1800

# DECLARATION

THE STATE OF NEW YORK  
COUNTY OF ...  
I, ...  
do hereby certify that ...  
...

Վճրագիր **Ն. Մանուկ**  
Թարգմ. և կոնտր. սրբագրել է Յե. Տեր-Մինասյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրել է Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր Ի. 4882. Հրատ. № 445

Պատվեր № 644. տիրաժ 100.000.

Ինդեքս  $\frac{PC}{PK}$

Հանձնված է արտադրության 1937 թ. ապրիլի 20-ին

Ստորագրված է տպագրելու 1937 թ. մայիսի 23-ին

Գինը 30 կ.

---

Պետհրատի տպարան, Յերևան.

1940

1541

Пров, 1940

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0021261

№ 034м.у.  
4172 20 409.

А 11  
6933

**И. СТАЛИН**

О недостатках партийной работы  
и мерах ликвидации троцкистских  
и иных двурушников

Довлад и заключительное слово на  
плenumе ЦК ВКП(б) 3—5 марта 1937 г.